

Կ. Գ. Շիրժեան



ԱՅԱՍՏԱՆԻ
ՀՐԱԲԻԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ
ՀՐԱԲԻԱՅՆԻ
ՃԻՆԱՆՅՈՒԹԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 1963

14315 46891

Шеремет К.Г.

Донбас и вулканогес-
сийский регион Армении.

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ГЕОЛОГИЧЕСКИХ НАУК

К. Г. ШИРИНЯН

ВУЛКАНИЗМ И ВУЛКАНИЧЕСКИЕ
СТРОЙМАТЕРИАЛЫ АРМЕНИИ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԵՐԿՐՈԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆՍՏԽԱԲ

523. Ը.

Կ. Գ. ՇԻՐԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱԲԻԱՑՆՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀՐԱԲԻԱՑԻՆ ՇԻՆԱՆՑՈՒԹԵՐԸ

4689+
14315

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԵՐԿՐՈԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆՍՏԽԱԲ

Աշխատությունը ծանոթացնում է Հայաստանի ոչ վաղ երկրաբանական անցյալի հրաբխային երևույթներին, հանրամատչելի ձևով բացատրում է հրաբխային երևույթների պատճառները և զանազան կազմի ու բնույթի ապարների առաջացման պայմանները:

Դրույժ ցույց է տրվում հրաբխային ապարների կիրառման ամենաբազմազան բնագավառները: Խոսվում է առանձին ապարների և հանքավայրերի ժողովրդա-տնտեսական նշանակության մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՆԳԱՄ ՀՐԱԲՈՒԽՆԵՐԻ ԵՐԿԻՐ

Հայկական ՍՍՌ-ը լեռնային երկիր է: Նա գորավում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասը:

Երկրի ոելլեֆը ներկայացված է ծալքավոր լեռնաշղթաներով, խոշոր հրաբխային զանգվածներով ու սարահարթերով, նեղ և խոր գետային հովիտներով, նոր և հին լճային գոգավորություններով:

Ռեսպոբլիկայի ամենաբարձր կետը Արագած լեռան գագաթն է (4095 մ), որը ներկայացնում է իրենից մի խոշոր հանգած հրաբուխ:

Հայկական բարձրավանդակի ամբողջ երկրաբանական զարգացմանը, որը ընդգրկում է մի քանի հարյուր միլիոն տարի, հատուկ է եղել պարբերաբար կրկնվող ինտենսիվ հրաբխային գործունեությունը, որոնց թվում առավելապես մեծ տարածում ունեն այսպես կոչված անտրոպոգենյան¹ դարաշրջանում տեղի է ունենում ժամանակակից բարձր լեռնային ոելլեֆի կազմավորումը ամբողջ Հայկական լեռնաշխարհում:

Մոտ մեկ միլիոն տարվա ընթացքում Կովկասի, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի ոելլեֆը բարձրացել է 2—3 հազար մետրով: Հարկավոր է նշել, որ երկրագնդի երկրաբանական պատմությունը ընդգրկում է բավականին երկարատև ժամանակամիջոց՝ 3,5—4 միլիարդ տարի: Այս տեսա-

1 Անտրոպոգոս հունարեն բառ է, որը նշանակում է մարդ: Անտրոպոգենյան է կոչվում այն պատճառով, որ նշված դարաշրջանի սկզբում հանդես է եկել մարդը: Այդ ժամանակ կազմավորվել են նաև ժամանակակից բուսական ծածկոցն ու կենդանական աշխարհը:

կետից Հայաստանի լեռները, որոնք իրենց ժամանակակից բարձրությանն են հասել վերջին մեկ միլիոն տարում, համարվում են բավականին երիտասարդ:

Լեռնակազմական այսպիսի խոշոր շարժումները ուղեկըցվել են երկրակեղեցի խորը ճեղքվածքներով և նրանց հետ կապված ինտենսիվ հրաբխային ժայթքումներով: Վերջիններս ամենից ուժեղ են արտահայտվել Հայաստանի տերիտորիայում, որտեղ հրաբխային նյութերը ունեն շատ ավելի միծ տարածում, քան Կովկասի մի այլ շրջանում: Հայաստանի ոչ հեռավոր հրաբխային անցյալի մասին է խոսում նրա ամբողջ բնությունը: Մեսապովլիկայի խոշորագույն լեռնաշղթաներից ու բարձրավանդակներից մի քանիսը՝ Գեղամա, Վարդենիսի, Զանգեզուրի, ունեն հրաբխային ծագում: Այդ լեռնաշղթաների ջրաժան մասում մինչև օրս կարելի է տեսնել իրար կողք-կողքի դասավորված հրաբխային լեռնագագաթներ, որոնք առաջացել են երկրակեղեցի որոշակի ուղղություն ունեցող խորը ճեղքվածքների վրա: Հայկական հրաբխային բարձրավանդակի արևելյան մասում միջօրեականի ուղղությամբ ձրգվում են բարձրագիր հրաբխային լեռներ՝ Մեծ ու Փոքր Մասիները և Ջավախիկի լեռնաշղթան:

Նորագույն ժամանակաշրջանի հրաբխային նյութերը մինչև մի քանի կմ հաստության հասնող շերտով ծածկում են ուսուպովիկայի ամբողջ տերիտորիայի մոտ 2/3 մասը:

Հայաստանի տերիտորիայում ի հայտ են գալիս հրաբխային գործունեության ամենաբազմազան ձևեր և դրա հետ կապված բազմապիսի հրաբխային նյութեր:

Հրաբխային գործունեության բազմազանությամբ, ինչպես նաև ժայթքման կենտրոնների և հրաբխային նյութերի հիմնալի պահպանվածությամբ, Հայաստանը դասվում է աշխարհի դասական հրաբխային շրջանների շարքը: Այս տեսակետից էլ մեզ մոտ մեծ հնարավորություններ են ստեղծված հրաբխայնությունը ուսումնասիրելու համար:

Իսկ ինչո՞ւ են անհրաժեշտ հրաբխայնության ասպարեզում կատարվող ուսումնասիրությունները և արդյոք այդպիսիք ունեն որևէ գործնական կամ գիտական նշանակություն: Նախ և առաջ հրաբխային գործունեության ուսումնասի-

բությունը սերտ կերպով կապված է երկրագնդի ընդերքի ու-
սումնասիրման խնդիրների հետ:

Թե ի՞նչ է կատարվում մեր ոտքի տակ, մենք այդ մա-
սին դեռ շատ քիչ բան գիտենք: Այն պարզելու համար փորում
ենք հորատման անցքեր, որոնց ամենամեծ խորությունը մին-
չև այժմ 8 կմ է, իսկ դա երկրագնդի շառավղի միայն մեկ յոթ-
հարյուրերորդական մասն է կազմում: Արան հակառակ հրա-
բումը ինքն է դուրս բերում երկրի խորքում գոնվող նյութը,
ուստի հրաբխային գործունեության երկարատև ուսումնասի-
րությունները մեզ թույլ են տալիս թափանցելու երկրի կեղևի
ավելի մեծ խորությունները, ըմբռնելու այդ խորություններում
կատարվող երևույթների էությունը:

Հրաբխային գործունեության շնորհիվ երկրի կեղևի խոր-
քից մակերես են դուրս բերվում տարբեր կազմի հրահեղովկ
զանգվածներ, գազեր և ջրային գոլորշիներ, որոնց ուսումնա-
սիրությունը հնարավոր է դարձնում պարզելու երկրի կեղևի
բաղադրությունը տարբեր մասերում և խորություններում:

Հրաբխային երևույթների ուսումնասիրությունները հնա-
րավորություն են տալիս պարզելու, թե ի՞նչու մեզ շրջապա-
տող ապարները (քարատեսակները) այդքան բազմազան են
և ինչո՞վ է պայմանավորվում այդ բազմազանությունը, ինչ-
պես են առաջանում տարբեր տեսակի օգտակար հանածոները
և որոնք են նրանց տեղաբաշխման օրինաշափությունները:

Հրաբխային գիտության հիմնական խնդիրներից մեկն է հան-
դիսանում նաև հրաբխային ժայթքումների կանխագուշակումը:

Ներկայումս աշխարհում հայտնի են 500-ից ավելի գոր-
ծող հրաբուխներ: ՍՍՌ-ում նրանք հայտնի են միայն
Կամշատկայում և Կուբիլյան կղզիներում: Դրա հետ միասին
երկրագնդի բազմաթիվ շրջաններում հայտնի են «քնած»
հրաբուխներ, որոնք գործել են ոչ հեռու անցյալում
և շի կարելի վստահ լինել, որ նրանք լրիվ մարել են և շնո
վերսկսի իրենց գործունեությունը: Պայմանականորեն, Հայ-
կական բարձրավանդակի հրաբխային կենտրոնները կարելի
է դասել դեռ վերջնականապես շմարած հրաբուխների խմբին:
Երկրագնդի վրա հայտնի են հրաբուխներ, որոնք գործել են

Հազար և ավելի տարիներ հանգստի վիճակում գտնվելուց
հետո:

Հայկական լեռնաշխարհում՝ Վանա լճի ափին գտնվող
Նեմրութ հրաբխի վերջին գործոմեռությունը տեղի է ունեցել
1441 թ.:

Հրաբխային գործոմեռությունը սովորաբար դադարում է
աստիճանաբար: Հրաբխային նյութերի երկրի մակերես
դուրս բերվելու անմիջական պրոցեսի դադարումը դեռ չի խո-
սում հրաբխային օջախի լրիվ սառեցման և հրաբխային պրո-
ցեսների լրիվ ավարտման մասին:

Հայաստանում դեռ վերջնականապես շառած հրաբխային
օջախների առկայության մասին են խոսում երկրի մակերես
դուրս եկող տաք (թերմալ) ջրերը, որոնց օրինակ կարող են
հանդիսանալ ջերմուկ բուժավայրի աղբյուրները: Ջրի ջեր-
մաստիճանը նշված վայրում մի քանի տասնյակ մետր խորու-
թյան վրա 60° -ից ավելի է և բացառված չէ այն հանգամանքը,
որ ավելի խոր հորատման անցքերը կհանդիպեն առավել
բարձր ջերմաստիճան ունեցող ջրի ու գուցե և ջրային գոլորշու-
որոնք կարող են ունենալ գործնական մեծ նշանակություն:
Խոլանդիայում վաղուց ի վեր տաք աղբյուրները օգտագործ-
վում են տնային տնտեսության մեջ: Արդեն մեկ դար է ինչ
հտալիայում գոլորշու բնական ուժը օգտագործվում է էլեկ-
տրաէներգիա ստանալու համար: Մեզ մոտ մեծ աշխատանք-
ներ են ծավալվում կամշատկայի և Կուրիլան կղզիների
բնական տաք ջրերի օգտագործման ուղղությամբ: Վերջերս
տաք ջրերի մեծ պաշարներ են Հայտնաբերված Տաշքեն-
դում, որոնց բազայի վրա իրագործվում է քաղաքի ջեռուցման
ցանցի աշխատանքները:

Հայկական լեռնաշխարհում և առհասարակ ամբողջ Կով-
կասում ակնառու է նաև հրաբխային գործոմեռության ամենա-
կարենոր պատճառներից մեկը՝ երկրի կեղևի դարավոր ուղղա-
ձիք տատանումները: Այս տեսակետից Կովկասը պատկա-
նում է երկրագնդի այն գոտիներին, որոնց ժամանակակից
էպոխայում հատուկ է մեծ շարժողականություն:

Երկրի կեղևի տատանումների առկայությունը և մեծությու-
նը ստուգվում է պարբերաբար կրկնվող հարթաշափական աշ-

խատանքներով։ Այդ ձափումների վերլուծովթյունը ցույց է տալիս, որ Կովկասի, առանձին շրջաններում, տեղի է ունենում բարձրացում, իսկ այլ շրջաններում՝ իջեցում։ Տատանումների ուղղաձիգ շարժման մեծովթյունը կազմում է տարեկան 2—14 մմ և ավելի։


Հայաստանում այդ շարժումների առկայությունը կարելի է տեսնել գետահովիտներում, որոնց խորացումը կապված է վայրի բարձրացման հետ, իսկ ընդհակառակը, գետի գալարումների առաջացումը և հովտի ճահճացումը տվյալ վայրում երկրի կեղևի իջեցման հետ։

Երկրի կեղևի տատանման անմիջական ապացուց են հանդիսանում պարբերաբար կրկնվող երկրաշարժերը։ Այս բոլոր փաստերը խոսում են այն մասին, որ երկրի կեղևում կան դեռ ջերմային էներգիայի նշանակալից պաշարներ։

Ունենալով մի քանի կիլոմետր բարձրություն, հրաբխային լեռները մեծ փոփոխություններ են առաջացրել Հայկական լեռնաշխարհի նախկին, համեմատաբար հարթ ու ելքեֆում, փոխելով ջրային ավազանների տեղաբաշխումը, գետերի հոսման տողությունը, կլիման և դրա հետ կապված բուսական և կենդանական աշխարհի տեղաբաշխումը։

Հրաբխային նյութերը կարեռ նշանակություն ունեն ուսպուրլիկայի ժողովրդական տնտեսության մեջ, դրանց զգալի մասը հանդիսանում է բարձր որակի և շահավետ շինանյութ։ Հրաբխային նյութերի հետ են կապված մի շարք օգտակար համածոներ։ Հրաբխային լեռներից շատերը, ինչպես օրինակ Արագածը, Գեղամա, Վարդենիսի և այլ բարձրավանդակներ ու հրաբխային լեռներ ունեն խոշոր ջրատնտեսական նշանակություն։ Այսպես, օրինակ՝ Արագած լեռնազանգվածը, որի հիմքի տրամագիծը մոտ 100 կմ է, կարեռ դեր է խաղում սահմանակից շրջանների ջրամատակարարման և ոռոգման գործում։ Այդ լեռնազանգվածը կազմող հրաբխային ապարները հարուստ են ձեղքվածքներով, խոռոչներով և ծակոտիներով, որոնց մեջ օդից խտացող ջրային գոլորշիները միանալով տեղումնային ջրերի հետ, ստեղծում են յուրօրինակ մի ջրավազան, որի պաշարները փաստորին անսպառ են։

Տատ քերին է հայտնի, որ Երևան քաղաքի հանրահռչակ



Նկ. 1. Արագած հրաբխային լեռներ

Խուսանկար Ա. Հ. Կարապետյանի

նառը և մաքուր ջուրը նույնպես կապված է հրաբխային ապարների հետ և սկիզբ է առնում Գեղամա լեռների ստորոտներում։ Ապացուցված է, որ բարձր լեռների մեջ տեղադրված գեղատեսիլ բարձրագիր Սևանա լճի առաջացումը պայմանավորվել է նրանով, որ հազարամյակներ առաջ նրան սահմանակից շրջանի հրաբուխներից սկիզբ առած լավային հոսքը փակել են տեկտոնական իջվածքով։ Հոսող հնագույն Հրազդանի հունը և առաջացրել յուրօրինակ ջրավագան։

Լճային ջրավագանը շրջապատող հրաբխային լեռների ուսումնասիրությունը անմիջական կապ ունի Սևանա լճի ջրի մակերևույթի պահպանման պրոբեմի հետ, քանի որ ջրային ուժիմի մեջ դեր են խաղում ստորերկրյա՝ միջլավային ջրերը, որոնք հոսում են լավաների տակ թաղված նախկին գետային հովիտներով։

ՀՐԱԲՈՒԽՆԵՐԻ ԵՎ ՀՐԱԲԽԱՅԻՆ ԱՊԱՌՆԵՐ

Հրաբխային երևույթները հարում են երկրագնդի որոշակի գոտիներին, ուր երկրի կեղեքը կազմող շերտերը ենթարկված են ուժեղ ծալքավորման, հատված են խորը ձեղքվածքներով ու ջարդվածքներով։ Երկրագնդի վրա առանձնացվում են երկու այդպիսի գոտիներ, որոնցից մեկը ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ շրջակալելով Խաղաղ օվկիանոսը, իսկ մյուսը՝ հասարակածի ուղղությամբ՝ ընդորկելով Ալպ-Հիմալայան սիստեմը, սկսած Պիրինեյան լեռներից արևմուտքում և մինչև Մալայան արշիպելագը՝ արևելքում։

Հրաբուխների տեղաբաշխման մեջ նկատվում է նաև մի այլ օրինաշափություն, որ նրանք տեղադրված են օվկիանոսների առափնյա մասերում կամ կղզիներում և հազվագեց են ներցամաքային խորը շրջաններում։ Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ մայր ցամաքների և խոշոր ջրային

1 Տեկտոնիկա—հունարեն բառ է, որը նշանակում է կառուցում։ Տեկտոնիկան կամ գեոտեկտոնիկան երկրաբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է երկրի կեղեքի շարժումները։ «Տեկտոնական իջվածք» նշանակում է երկրի կեղեռում ընթացող շարժումների հետևանքով առաջացած իջվածք։

ավագանների սահմանները համարվում են երկրի կեղևի համեմատաբար թույլ և շարժում գոտիները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրաբխային ժայթքումների ժամանակ հսկայական քանակով ջրային գոլորշիներ են անցատվում, դիտնականները հանգում են այն եղանակացության, որ օվկիանոսների ջուրը երկրի ճեղքվածքներով կարող է հասնել երկրի կեղևի հրահեղուկ մասսային և բարձր չերմաստիճանի պայմաններում վերածվելով գոլորշու, նպաստել հրաբխային ժայթքումների առաջացմանը:

Հրաբխային պրոցեսները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ էֆֆուզիվ (մակերեսային) և ինտրուզիվ (խորքային):

Էֆֆուզիվ հրաբխայնության ժամանակ մագման, որը իրենից ներկայացնում է սիլիկատային բարդ կազմովթյուն ունեցող հալոցք, վեր է բարձրանում երկրի կեղևի ներքին շերտերից, գազային նյութերի ու ջրային գոլորշիների հետ միասին դուրս է գալիս երկրի մակերեսույթ և լավայի ձևով տարածվում ու սառչում է սովորական պայմաններում: Չերմության, գազերի և ջրային գոլորշիների արագ կորստի պատճառով մագմատիկ հալոցքը մակերեսովթային պայմաններում ընդհանրապես լրիվ շի բյուրեղանում և մեծ մասամբ մնում է ամորֆ, ապակենման վիճակում, հարուստ ճեղքվածքներով, գազային խոռոշներով ու ծակոտիներով:

Ինտրուզիվ գործունեության ժամանակ մագման դուրս չի գալիս երկրի մակերեսույթ, այլ ներդրվելով երկրի կեղևի վերին շերտերի մեջ, սառչում է բավականին դանդաղ, մեծ ճընշման ու բարձր չերմաստիճանի պայմաններում ձեռք բերելով լրիվ բյուրեղային կառուցվածք: Խորքային ապարները սովորաբար հոծ են և ճեղքվածքներով աղքատ:

Հայաստանի հրաբխային երեսությները բնորոշվում են ինչպես էֆֆուզիվ, այնպես էլ ինտրուզիվ գործունեությամբ:

Էֆֆուզիվ հրաբխային գործունեության նյութերը բաժանվում են երեք հիմնական տիպի՝ գազային նյութեր, հրահեղուկ նյութեր կամ լավաներ և բեկորային նյութեր (հրաբխային ոռմբեր, ավազ, մոխիր և փոշի): Թվարկված բոլոր նյութերը տարրեր հարաբերությամբ հանդիս են գալիս հրա-

բըխային ժայթքումների ժամանակ, պայմանավորելով ժայթք-
ման բնույթը և տիպը:

Մագմատիկ հալոցքում գաղային բաղադրիչների սակա-
վությունը պայմանավորում է հրահեղուկ նյութի քիչ թե շատ
հանգիստ արտավիճումը լավային հոսքերի ձևով:

Եթե մագմայի մեջ եղած գաղերի և ջրային գոլորշիների
քանակը հասնում է մեծ չափերի և մագմատիկ ավազանը
գտնվում է երկրի կեղևի մեծ խորություններում, տեղի է ու-
նենում բուռն հրաբխային ժայթքումներ, որին ուղեկցում է
մեծ քանակով հրաբեկորային նյութերի արտավիճում: Պա-
տահում են դեպքեր, երբ մագմատիկ ավազանում գաղերի և
ջրային գոլորշիների ճնշումը այնքան է մեծանում, որ ժայթ-
քումներն սկսվում են ուժեղ պայթումներով բեկորատելով
և օդ շպրտելով մագմատիկ ավազանի ծածկոցը կազմող ա-
պաբները: Այսպիսի հրաբխային ժայթքումների էներգիան
հասնում է աստղաբաշխական թվերի: Օրինակ հաշված է, որ
Կամչատկայում գանվող Բնովիմյաննի հրաբխի 1956 թ. մարտի
30-ի ժայթքման ժամանակ առաջացած էներգիան, Կույբիշ-
յան հիդրոէլեկտրակայանը կարող է արտադրել միայն 3,5
հազար տարում:

Այդպիսի ավերիչ բնույթ կրող ժայթքումների դեպքում,
մագմատիկ ավազանի հաստ ծածկոցը կազմող ապարները
վեր են ածվում մասր բեկորների, ընդհուպ մինչև ավազի և
փոշու Մանր հրաբխային փոշին կարող է թափանցել տների
պատուհանների և դռների ճեղքերից ներս: Երբեմն հրաբխա-
յին ժայթքումներից առաջացած փոշու հատիկներն այնքան
մանր են և թեթև, որ ընկնելով մթնոլորտի վերին շերտերը՝
սարատութերամ, օդային հոսանքների միջոցով փոխադրվում
են տասնյակ հազարավոր կիլոմետրեր, նույնիսկ լրիվ պտույտ
գործում երկրագնդի շուրջը:

Հրաբխային ժագման բեկորային ապարների կազմը կախ-
ված է ինչպես լավայի բաղադրությունից, այնպես էլ մագ-
մատիկ ավազանի ծածկոցը կազմող քարատեսակներից:

Հայկական լեռնաշխարհում հրաբխային ժագման բեկո-
րային ապարները մեծ տարածում ունեն Արագածում, Գեղա-
մա, Զանգեզուրի բարձրավանդակներում և այլ շրջաններում:

Հրաբեկորային նյութը ժայթքումից հետո ունենալով բարձր շերմաստիճան և որոշ պլաստիկություն, ընդունակ է ձուզվելու և վերածվելու ամուր քարատեսակի, որի մանրահատիկ տեսակները հայտնի են որպես տուփեր, իսկ համեմատաբար խոշոր բեկորային նյութից կազմված տեսակները՝ որպես տուփորբեկչաներ: Տուփերը կարող են առաջանալ նաև ջրային ավագանում մանր բեկորային նյութերի ցիմենտացումից:

Խորբային հրաբխայնության կամ ինչպես ընդունված է ասել մագմայի ինարուղիվ գործունեության ժամանակ բեկորային ապարներ շեն առաջանում: Զրային գոլորշիների և զաղերի հսկայական քանակությունը, որը էֆֆուզիվ հրաբխականության ժամանակ մթնոլորտ է շպրտվում, ինտրուզիվ պրոցեսների դեպքում անջատվելով մագմայից ներարկվում է մագմատիկ ավագանը շրջակայող շերտերի ճեղքվածքները և առաջացնում զանազան տիպի հանքային երակներ, որոնք շատ դեպքերում ունենում են արդյունաբերական նշանակություն:

Հայաստանում ինտրուզիվ ապարները և նրանց հետ կապված օգտակար հանածոները մեծ տարածում ունեն ոեսպորլիկայի հարավում՝ Զանգեզուրում և Հյուսիսում՝ Գուգարքում:

Խորբային հրաբխայնության հետ է կապված ոեսպորլիկայում հայտնի պղնձի և մոլիբդենային հանքանյութերի առաջացումը Ալավերդում, Ղափանում, Քաջարանում, Հանքավանում և այլն:

Ինտրուզիվ մարմինները հաճախ հասնում են հսկայական չափերի: Հայտնի են ինտրուզիաներ, որոնց մակերեսը կազմում է մի քանի հազար քառ. կմ: Զանգեզուրում գտնվող Մեղրու ինտրուզիան զրավում է ավելի քան 1000 քառ. կմ մակերես:

Ինչպես մենք նշեցինք, մագման իրենից ներկայացնում է բարդ սիլիկատային հալոցք, որը ներթափանցելով երկրի վերին շերտերը վեր է ածվում ավելի պարզ բաղադրիչ մասերի, պայմանավորելով տարբեր տեսակի ասպարների առաջացումը: Մագմայի, հետեւապես մագմատիկ ապարների, 92,25% հիմնականում կազմում են 9 էլեմենտ՝ թթվածինը

(O), սիլիկացողը (Si), ալյումինիումը (Al), երկաթը (Fe), կալցիումը (Ca), նատրիումը (Na), կալիումը (K), մագնիզիումը (Mg) և տիտանը (Ti), ըստ ոքում առաջին երեք էլեմենտները կազմում են մագմայի բաղադրության 82,4%:

Տարրեր տեսակի հրային ապարներում այս էլեմենտները հանդես են գալիս տարրեր հարաբերությամբ և առանձին դեպքերում առաջացնում են արդյունաբերական նշանակություն ունեցող կուտակումներ:

Այսպիս, օրինակ՝ Հայաստանում մեծ տարածում ունեցող այն ինարուվիվ ապարները, որոնք հայտնի են նեֆելինային սիենիտներ անվան տակ, հանդիսանում են ալյումինիումի հումքի աղբյուր և նրանց բաղայի վրա այժմ կառուցվում է Հրազդանի լեռնա-քիմիական կոմքինատը:

Մագմայի հիմնական բաղադրիչ մասն է կազմում սիլիկահողի օքսիդը, որի տուկոսային հարաբերության հիման վրա բոլոր հրաբխային ապարները բաժանվում են 3 խմբի:

1) Գերհիմքային և հիմքային ապարներ—մինչև 55% SiO_2 բաղադրությամբ;

2) Միջին կազմի թթվության ապարներ—55—65% SiO_2 բաղադրությամբ;

3) Թթու և գերթթու ապարներ—65%-ից ավելի SiO_2 բաղադրությամբ:

Գերհիմքային ապարներից Հայաստանում մեծ տարածում ունեն այսպիս կոչված զունիտները և պերիդոտիտները (β -աստրոհարի, Կրասնոսելսկի, Ամասիայի և Վեդու շրջաններում), որոնց հետ կապված են քրոմի, ասրեստի, մագնիսիումի հանքայնացումները:

Հիմքային ապարների հանրածանոթ և ամենամեծ տարածում ունեցող ներկայացուցիչը դա բազալտն է և նրա ինտրուզիվ տարատեսակը՝ գարբոն:

Որպես միջին թթվության ապար կարելի է հիշատակել անդեղիտը և նրա խորքային հոմանիշը՝ դիորիտը:

Ինտրուզիվ ապարներից հայտնի են նաև սիենիտները: Սիենիտների էֆֆուզիվ նմանակիրները՝ տրախիտները Հայաստանում քիչ են տարածված և պրակտիկ նշանակություն չունեն:

Թթու և գերթթու ապարներից մեծ տարածում ունեն և հանրածանոթ են գրանիտային խմբի ապարները և նրանց էֆֆուզիվ նմանակիրները՝ լիպարիտները, օրսիդիանը և այլն:


Մագմատիկ հալոցքը, կախված սիլիկահողի քանակից ունենում է տարրեր մածուցիկություն և շարժումակություն: Որքան բարձր է սիլիկահողի պարունակությունը լավացում, այնքան բարձր է նրա մածուցիկությունը՝ և ընդհակառակը: Սրանով է բացատրվում այն հանգամմանքը, որ հիմքային բազալտային լավաները դյուրաշարժ են, նրանք կարող են հոսել տասնյակ և ավելի կիլոմետրեր, տարածվելով երբեմն հսկայական մակերեսի վրա:

Բազալտային լավաներով են ծածկված Հայաստանում եղվարդի, Կարմրաշինի, Եռարլուրի, Քանաքեռի, Լոռու սարահարթերը: Բազալտային լավաները շատ գեղքերում հոսում են գետային հուներով 3—5 մ/վրկ և ավելի մեծ արագությամբ: Հրազդանի հունով հոսած բազալտային լավայի հոսքը, որը սկիզբ է առնում Գեղամա լեռների ստորոտներում գտնվող հրաբուխներից, ունի մոտ 60 կմ երկարություն:

Սիլիկահողով գերհագեցած լավաները, ունենալով մեծ մածուցիկություն ընդունակ չեն մեծ հոսքեր, կամ ծածկոցներ կազմելու: Այսպիս օրինակ՝ Երևանից հյուսիս տեղադրված Հաղիս լեռը կազմված լինելով թթու ապարներից (օբսիդիաններ, լիպարիտներ) համարյա թե զուրկ է հոսքից և իրենից ներկայացնում է հրաբխային ելքի շուրջը գոյացած հսկայական շափերի համար գերմածուցիկ մասսայից առաջացած գմբեթաձև մի կառուցվածք:

Գաղերի և շրային գոլորշիների միևնույն պարունակության գիպքում թթու լավաները ավելի պայմուցիկ են, քան հիմքային լավաները: Հիմքային լավաներից, որոնք շատ ավելի դյուրահալ են, գաղերը և շրային գոլորշիները անշատվում են առանց մեծ դիմագրության հանդիպելու, իսկ թթու մածուցիկ լավաներից՝ ընդհակառակը: Թթու լավաներում գտնվող գաղը կամ շրային գոլորշին լայնանալիս պիտք է հաղթահարեն այդ մածուցիկ լավայի արտաքին ճնշումը, որը հնարավոր է միայն ներքին ճնշման աստիճանական ավելացման դեպքում: Երբ լավայում լուծված գաղերը և շրա-

յին գոլորշիները համակենտրոնացվելով փոքր ծավալում հաղթահարում են արտաքին ձնշումը, նրանց անջատումը տեղի է ունենալում շատ բուռն կերպով նման պայթյունի, որի շնորհիվ դագերի կողմից ճեղքված հրահեղուկ մասսան վեր է ածվում առանձին բեկորների:



Նկ. 2. Հրաբխային սումբերի տարրեր ձեռք:

Հայաստանում մեծ տարածում գտած հրաբեկորային ապարների գերազանցող մասը՝ տուֆերը, պեմղաները, հրաբխային մոխիրը և ավազը հանդիսանում են թթու լավայից առաջացած նյութեր:

Բազալտային կազմի բեկորային նյութերը շատ ավելի
քիչ են և ներկայացված են այսպես կոչված հրաբխային ռում-
բերով: Հրաբխային ռումբերը հանդես են գալիս որոշակի
ձևերով՝ կլոր, ձվաձև, տանձաձև, իլիկաձև և սկավառակաձև:
Նրանց չափսերը տատանվում են մի քանի մմ-ից մինչև մեկ
երկու տասնյակ մ³, կշռելով մինչև 50 և ավելի տոննա: Ռում-
բերն իրենց որոշակի ձևը ստանում են թոհջքի ժամանակ
օրում պտտվելիս, որը հնարավոր է միայն լավայի որոշակի
պլաստիկության դեպքում և դրա համար էլ կանոնավոր ձևի
ռումբերը հատուկ են միայն բազալտային լավաներին:

Ժամանակակից գործող հրաբուխների ուսումնասիրու-
թյունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ բեկորային
նյութի քանակը 10 և ավելի անգամ գերազանցում է արտա-
վիժված լավայի քանակին, համելով առանձին դեպքերում
100 և ավելի կմ³: Օրինակ՝ Հայաստանում միայն Արագած լե-
ռան շրջակայքում հրաբեկորային նյութերը կազմում են ավե-
լի քան 120 կմ³:


ՀՐԱԲԽԱՅԻՆ ԱՊԱՐՆԵՐԸ ՈՐՓԵՍ ՇԻՆԱՆՅՈՒԹ

Հայաստանում լայն տարածված հրաբխային նյութերը
բարձր որակի բնական քարե շինանյութեր են:

Բնական շինանյութեր ընդունված է սնվանել երկրի կեղևը
կազմող այն ապարները կամ միներալային գոյացումները, ո-
րոնք արդեն իրենց բնական վիճակում ոման որոշակի շինա-
րարական հատկություններ: Այդպիսի շինանյութերը կարող
են օգտագործվել շինարարության մեջ բնական վիճակում
(հրաբխային խարամ (шլաք), պեմզա, ավազ, մոխիր) կամ
որոշ մեխանիկական մշակումից հետո (գրանիտ, բազալտ,
տուֆ), այսինքն նրանց համապատասխան ձև տալուց հետո:

Հայաստանի հրաբխային շինանյութերի օգտագործման
պատմությունը տանում է մեզ հազարամյակների խորքը:

Ուսումնասիրելով հնից մնացած կառուցվածքները՝ տա-
ճարները, ամրոցները, կամուրջները, եկեղեցիները, որոնցով
հարուստ է Հայաստանը, չի կարելի շնկատել բնական քարի
լայն կիրառումը մեծ չափերի հասնող բեկորներով, որը իր ժա-



Նկ. 3. Գառնիի տաճարի ավելքակները:

Լուսանկար՝ հեղինակի

մանակի տեխնիկայի պայմաններում, իրադորձվում էր ֆիզիկական ուժի լայն օգտագործմամբ:

Երևանից ոչ հեռու գտնվող Գառնիի ամրոցի (3-րդ դ. մ.թ. ա.) կամ Զվարթնոցի (641—661 թթ.) ավերակները վկայում են նախկինում հայտնի բետոնի պարզ ձևի լայն կիրառումը կազմված կրի և հրաբխային նյութերի (խարամ, պինդա, ավագ կամ մոխիր) խառնուրդներից, որպիսին իր ամրությամբ զարմանք է պատճառում:

Ժողովրդի որոշ խավերի շրջանում տարածված է այն միտքը, որ այդպիսի բետոնի ամրության պատճառը հանդիսացել է շաղախում ձվի սպիտակուցի կիրառումը, որը միանդամայն անհեթեթություն է: Իրականում դա բացատրվում է նրանով, որ հրաբխային որոշ ապարներ օժտված են կրային լուծույթի հետ կապակցվելու մեծ ակտիվությամբ, որի հետեւ վանքով ստացվում է բարձր ամրություն և դիմացկանություն ունեցող միացություն:

Հրաբխային նյութերը նույն ձևով կիրառվում են նաև այժմ: Որոշ հրաբխային նյութերի՝ խարամ, ավագ, տուփ, հատուկ են նաև բարձր հիգրավլիկական հատկություններ, այսինքն հանգած կրի շաղախում խոնավ պայմաններում և ըրային միջավայրում ամրանալու ունակություն:

Հիգրոտեխնիկական կառուցումներում անփոխարինելի շինանյութ է հանդիսանում հիգրավլիկական ցեմենտը և այս տեսակետից Հայաստանի մի շարք հրաբխային նյութերի նշանակությունը շափականց մեծ է:

Ինչպես բնական, այնպես և բոլոր տեսակի շինանյութերի որակը և պիտանիությունը առաջին հերթին որոշվում է արանց ֆիզիկո-մեխանիկական հատկությունների առանձնահատկությամբ: Դրանք են տեսակաբար և ծավալային կշիռ, ծակոտկենություն, շրակլանման բնորունակություն, ցրտակայունություն, սեղման և ձգման դիմացը պրողականություն, հրակայնություն և այլն: Այս բոլորի կողքին կարևոր նշանակություն ունեն շինանյութերի տեղադրման պայմանները, հեռավորությունը օգտագործման վայրից, փոխադրման շահավետությունը, շահագործման և մշակման հեշտությունը և այլն:

Նշված պահանջները նկատի ունենալով Հայաստանի

Հրաբխային նյութերի գերակշռող մասը հանդիսանում են բարձր որակի և էժան շինանյութեր: Հայաստանում է գոտնվում շինանյութերի միութենական պաշարների մոտ 90%-ը, որտեղ հիմնական տեղը պատկանում է Հրաբխային ապարներին:

Հայաստանը հանդիսանում է պեմզայի հիմնական մատակարարողը: Հանրահոչակ են և լայն կիրառում ունեն շինարարության մեջ Հայաստանի հրաբխային տուֆերը, որոնք իրենց ֆիղիկո-մեխանիկական հատկությունների յուրահատկությամբ և առանձնահատուկ գեղազարդությամբ արժեքավոր և անփոխարինելի շինանյութ են հանդիսանում:

Անսպառ են Հայաստանում խարամի պաշարները, որոնք պեմզաների հետ միասին կարող են օգտագործվել ոչ միայն որպես շաղկապող նյութ, զանազան տեսակի բետոններում, այլ նաև որպես հումք ապակու արդյունաբերության մեջ, որպես կլամիչ և հզկող նյութ:

Մեծ տարածում են գտել մեզ մոտ և որոշակի արժեք են ներկայացնում, հրաբխային մոխրի հիդրավլիկական հատկություններով օժտված տարատեսակները, այսպես կոչված տրասները և պուցոլանները, որոնք օգտագործվում են հատուկ տեսակի ցեմենտի ստացման համար:

Վերջին տարիներում արդյունաբերական կիրառում գտած ոչ մետաղային միներալային հումքի նոր տեսակների շարքում կարևոր տեղ է գրավում հրաբխային ապակու հատուկ տեսակի՝ պերլիտի օգտագործումը, որի պաշարները Հայաստանում նույնպես չափաղանց մեծ են:

Հայաստանի հրաբխային շինանյութերը բավարարում են շինարարության ամենատարեր պահանջներին, օգտագործվելով որպես հիմքի և պատի շարժածքի քար, շենքերի երեսապատման համար, ճանապարհաշինարարության մեջ և այլն:

Կախված կիրառման նպատակից շինանյութերին ներկայացվում են տարբեր պահանջներ: Հիմքի շարժածքում օգտագործվող քարերը պետք է ունենան մեծ ամրություն և խտություն, լինեն անջրաթափանց և ցրտադիմացկում:

Այս պահանջներին լրիվ կերպով բավարարում են հոծ կառուցվածքի բաղալաները, անդեղիտները, անդեղիտո-բա-

զալտները, գրանիտները: Պատի շարվածքի մեջ օգտագործվող քարերը, ամրությանը զուգընթաց, պետք է ունենան փոքր ձավալային կշիռ, ցածր ջերմա-ձայնահաղորդականություն, լինեն ցրտադիմացկուն:

Եենքերի երեսապատման համար օգտագործվող քարերը գեղազարդ լինելուց բացի պետք է դիմացկուն լինեն հողմնահարման պրոցեսների հանդեպ, այսինքն լինեն երկարակեց: Վերը նշված հատկություններով են օժտված Հայաստանի հրաբխային տուֆերը, որի ապացուցներն են հայկական ճարտարապետության հին հուշարձանները:

ՀՐԱԲԽԱՅԻՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հրաբխային նյութերի դասակարգումը շինարարական կործում համընկնում է նրանց գենետիկական դասակարգման հետ:

Բոլոր հրաբխային շինանյութերը դասակարգվում են 2 մեծ խմբի, որոնք իրենց հերթին բաժանվում են առանձին ենթախմբերի: Առաջդիմ ստորաբաժանումը.

Ա.) Մասսիվ շինանյութեր

Բ.) Բեկորային շինանյութեր

Ա. Մասսիվ շինանյութերը ստորաբաժանվում են՝

1. Արտավիխտված կամ էֆֆուզիվ ծագման շինանյութերի
2. Խորքային կամ ինտրուզիվ ծագման շինանյութերի

Բ. Բեկորային շինանյութերը ստորաբաժանվում են՝

1. Փիսրուն բեկորային շինանյութերի

2. Ցեմենտացած կամ «ձուլված» բեկորային շինանյութերի:

Հայաստանի հրաբխային շինանյութերի նկարագրությունը մենք կսկսենք էֆֆուզիվ ծագման շինանյութերից:

1. Էֆֆուզիվ ՄԱԿՄԱՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐ

Արտավիխտված կամ էֆֆուզիվ ծագման շինանյութերը շայաստանում մեծ տարածում ունեն: Զգվելով ոեսպուբլիկայի ամբողջ երկարությամբ, սկսած Զավախսքի լեռներից, հյուսիս-

արևմուտքում, վերջացրած Ղարաբաղի բարձրավանդակով հարավ-արևելքում հասնելով մի քանի կմ հզորության: Հայաստանում հայտնի էֆփուղիվ ծագման շինանյութերը իրենց կազմով բավականին բազմազան են, սկսած հիմքային բազալտային լավաներից մինչև սիլիկահողով գերհազեցած թթու կազմի լիպարիտային լավաները: Համառոտակի կանգ առնենք էֆփուղիվ ապարների այն ներկայացուցիչների վրա, որոնք ունեն պրակտիկ նշանակություն և օգտագործվում են շինարարության մեջ:

Բազալտներ, անդեղիտո-բազալտներ, անդեղիտներ

Բազալտները երկրագնդի ամենատարածված ապարներից են, հանդես են գալիս երկրաբանական բոլոր դարաշրջաններում և ժամանակակից գործող մի շարք հրաբուխներում:

Բազալտը հանդիսանում է հիմքային ապար, նրա միջին քիմիական բաղադրությունը արտահայտվում է հետևյալ թվերով.

SiO_2 — 45—50 %	$\text{Fe}_2\text{O}_3 + \text{FeO}$ — 6—10 %
CaO — 8—9 %	MgO — 4—6 %
TiO_2 — 0,65—1,30 %	Na_2O — 2,3—3,2 %
Al_2O_3 — 14—16 %	K_2O — 0,8—1,70 %


Բազալտներում միներալային խմբերից գերակշռում են երկաթ-մագնեզիումային և ալյումո-սիլիկատային միներալները: Բազալտները լինում են մուգ գույնի ունենալով մոխրագույնից մինչև գորշ, սև գույն:

Բազալտային լավաները դյուրահալ են և շարժումն: Հոսելիս նրանք առաջացնում են մեծ ծածկոցներ և երկար հոսքեր:

Շատ հաճախ բազալտային լավան սառչելիս, ծավալի փոքրացման հետևանքով առաջացնում է բազմանիստ սյուներ ունեցող անջատումներ:

Բազալտների և անդեղիտո-բազալտների սյունաձև անջատման հիմնալի օրինակներ կարելի է տեսնել Հրազդանի կիրճում՝ Երևանի մանկական երկաթուղու շրջակայրում, Արզնի բուժավայրում և Աղատ գետի ձորում:

Բազալտների միջին տեսակարար կշիռը 3,3 է, ծավալայինը 2,8, սեղմման ժամանակավոր դիմադրողականությունը



Նկ. 4. Անդեղիտո-բազալտային լավայի սյունաձև անջառումները Որոտան գետի ավազանում:
Լուսանկար՝ հՆդինակի

1100 մինչև 5000 կգ/սմ², հալման ջերմաստիճանը 1200—1300°, զրակլանման տևակությունը կազմում է ծավալի 1—2,5 %:

Վերը բերված տվյալները պայմանավորում են բազալտային լավայի բարձր շինարարական հատկությունները: Բայց միայն շինարարությունը չէ, ուր բազալտները մեծ կիրառում են գտնել:

Վերջին տասնամյակներում զգալի կերպով լայնացել է բազալտների կիրառման բնագավառը:

Առանձնապես մեծ նշանակություն է ստացել ձուլված բազալտի կիրառումը: Բազալտի ձուլվածքը ունի բարձր դիմացրողականություն, հրակայնություն, նաև բավականին շեղոք է թթուների և հիմֆերի ներգործության նկատմամբ, որի պատճառով մրցում է թանկարժեք մետաղային ձուլվածքներից և կերամիկայից պատրաստված շինվածքների հետ:

Այժմ մեր Միության տարբեր վայրերում գործում են միքանի ձեռնարկություններ, որոնք թողարկում են բազալտային ձուլվածքից պատրաստված արտադրանք, սակայն դրանց պահանջը այնքան է մեծացել, որ ծրագրվում են մի շարք նոր ձուլարանների կառուցում և թողարկվող արտադրանքի զգալի աճ:

Սրագրված է քարե ձուլվածքի արդյունաբերության (պետրուրգիայի) զարգացում նաև Հայաստանում: Պետրուրգիայի արդյունաբերության զարգացումը կապված չէ բարդ տեխնոլոգիական պրոցեսների կամ հատուկ սարքավորումների հետ և արտադրությունը զերծ է արդյունաբերական մնացորդներից:

Քարե ձուլվածքի արտադրանքը բնորոշվում է բարձր ֆիզիկո-քիմիական հատկություններով: Մեկ տոննա բազալտային ձուլվածքից ստացված արտադրանքը, հաշվի առնելով նրա շահագործման երկարատևությունը, համարժեք է միքանի տոննա մետաղի:

Բազալտային ձուլվածքից ստացված արտադրանքը օգտագործվում է քիմիական, մետալուրգիայի, լեռնարդյունաբերության, ցեմենտի արդյունաբերության և մի շարք այլ բնագավառներում:

Բազալտային ձուլվածքից և երկաթի արմագործանե-

թից պատրաստված շինարարական դետալները՝ ոման կեռուման և ձգման բարձր դիմադրողականություն և այս տեսակետից մրցում են երկաթ բետոնի հետ:

Բազալտային հալոցքի կազմի փոփոխությամբ և օքսիդացմամբ կարելի է ստանալ վերահալված քարի տարրեր գույներ: Բազալտային հալոցքին կարելի կլինի տալ ցանկացած ճարտարապետական ձև՝ հարստացված զանազան զարդարներով, որը կփոխարինի դժվարին փորագրական աշխատանքները:

Բազալտային ձուլվածքը մեծ հաջողությամբ կարելի կլինի օգտագործել սալահատակման համար: Վերջին ժամանակներու հաստատված է բազալտային ապարների պիտանիությունը ցեմենտի արտադրության համար: Այս դեպքում վերացվում է այրման թանկարժեք պրոցեսը, որը անհրաժեշտ է ցեմենտի ժամանակակից արդյունաբերության մեջ:

Բազալտային ցեմենտի օգտագործմամբ կարելի կլինի ստանալ սնամեջ բլոկներ պատի շարվածքի և զանազան ճարտարապետական շինանյութերի համար:

Անդեղիտները բազալտներից տարրերվում են ավելի բաց գույնով, որը պայմանավորվում է նրանց կազմում երկաթմագնեղիտային միներալների սակավությամբ և ալյումոնիլիկատային բաղադրիչի ավելացմամբ:

Անդեղիտները բազալտների համեմատությամբ ավելի «փափով» պարներ են. անդեղիտների տեսակարար կշիռը տատանվում է 2,5—2,8 սահմաններում, իսկ ծավալայինը՝ 2,2—2,7: Սեղման ժամանակավոր դիմադրությունը զգալիորեն պակաս է բազալտներից և հավասար է 500—900 կգ/սմ², թեպետ առանձին դեպքերում այն հասնում է միշտ 2000 կգ/սմ²:

Անդեղիտները շատ հաճախ օժտված են լինում բարձր թթվակայնությամբ և օգտագործվում են թթվակայուն ցեմենտ և բետոն պատրաստելու համար: Թթվակայուն անդեղիտները քիմիական արդյունաբերության մի շարք բնագավառներում և հատկապես շինարարության մեջ օգտագործվում են նաև բնական վիճակում:

Բազալտների և անդեղիտների անցողիկ տիպերը հայտնի

են անդեղիտո-բազալտներ անվան տակ և ունեն նույնպիսի շինարարական հատկություններ ինչ բազալտները և անդեղիտները:

Նկարագրվող ապարների խումբը, ունի մեծ կիրառում շինարարության մեջ օգտագործվելով որպես որմնաքար, հիմքի քար, շենքերի խարիսխների և աստիճանների համար, ձանապարհաշինարարության մեջ, հուշարձանների շինարարության համար և այլն:

Բազալտներից և անդեղիտներից պատրաստված սարքավորումները վերջին տարիներս մեծ կիրառում են գտել թղթի և փայտամշակման ձեռնարկություններում, օգտագործվելով որպես աղացող և մանրացնող մեքենաների մասեր, մանրաթել, փայտանյութի մասսա ստանալու համար:

Բազալտներից և անդեղիտո-բազալտներից պատրաստվում են աղացող սալիկներ և մեքենաների առանձին մասեր, որոնք օգտագործվում են Միության տարեկը ձեռնարկություններում: 1959 թ. «Երևանի շինանյութ» գործարանը Միության 40 ձեռնարկություններից ստացել է 1,8 մ³ն. ոռուբրու արտադրանքի պատվեր: Նույն գործարանում կազմակերպվում է անդեղիտային ալյուրի ստացումը, որը որպես թթվակայուն նյութ բավարարելու է քիմիական արդյունաբերության պահանջները: Ներկայումս Հայաստանի Լեռնա-մետազուրգիական ինստիտուտի կողեկտիվին հաջողվել է բազալտից ստանալ հանքային սպիտակ բամբակ: Ստացված նյութը իր չերմա- և էլեկտրա հատկություններով կփոխարինի բնական աղբեստին և կօգտագործվի աղբեստ-ցեմենտի արտադրության մեջ:

Բազալտային և անդեղիտային խմբի ապարների կիրառումը չի սահմանափակվում միայն վերը նշված բնագավառներով: Բազալտները և նրան մոտ քարատեսակները, դրանք այն ապարներն են, որոնց ակադեմիկ Դ. Ի. Շերբակովը իրավացիորեն անվանում է «ապագայի հանքաքարեր»:

Հայտնի է, որ մարդկության կողմից օգտագործվող զանազան մետաղների թիվը տարեցտարի աճում է, իսկ երկրի ընդերքում տեղադրված մետաղային հանքավայրերի քանակը և նրանց պաշարները հետզհետեւ նվազում են: Ուրեմն կա-

րող է հասնել այնպիսի ժամանակ, որ որոշ մետաղային հանքավայրեր կսպառվեն և մարդկությունը կկանգնի մեծ դժվարության առաջ: Ահա այստեղ է, որ մեզ նորից օգնության են գալիս հրաբխային ապարները, գլխավորապես բազալտները, անդեղիտո-բազալտները, անդեղիտները:

Բազալտները և անդեղիտները բացի իրենց հիմնական մասը կազմող էլեմենտներից պարունակում են՝ Co, Ni, V, Zn, Cr, Zr, Ga, Sr, Cu, Pb, Yt և այլ հազվագյուտ և ցրված էլեմենտներ: Համեմատած հարուստ հանքավայրերի հետ, որտեղ նշված էլեմենտներից յուրաքանչյուրը կարող է տալ արդյունաբերական կուտակումներ, լավաներում նրանց պարունակությունը շատ ցածր է, բայց հաշվի առնելով բազալտային լավայի լրիվ կոմպլեքսային օգոտագործումը և հումքի աղբյուրի անսպառությունը, մարդկությունն ապահոված կլինի բոլոր իրեն անհրաժեշտ մետաղներով անսահմանափակ քանակությամբ:

Բազալտների, անդեղիտո-բազալտների և անդեղիտների պաշարները Հայաստանում ամենամոտավոր հաշվումներով 130 միլիարդ խորանարդ մետրից ավելի է: Միայն Երևան քաղաքի շրջակայքում այդ ապարների պաշարները կազմում են 800 մլ. մ³: Բազալտային սարահարթի վրայով են ձգվում քաղաքից հյուսիս Ավանի և Թբիլիսիի խճուղիները: Բազալտային ծածկոցները ունեն ավելի բարձր անտիսեյսմիկություն և այդ իսկ պատճառով նրանց վրա, քաղաքի 26 Կոմիսարների և Շահովանցանի շրջաններում մեծ շինարարություն է ծավալվում:

Բազալտները, անդեղիտո-բազալտները և անդեղիտները Հայաստանում այնքան մեծ տարածում ունեն, որ հարկ չկախուելու առանձին հանքավայրերի մասին:

Ռեսպուբլիկայի մի շարք վայրերում, ինչպես օրինակ Լենինականի, Ալավերդու, Սիսիանի, Թալինի և այլ շրջաններում այս քարատեսակների հանույթը կատարվում է առանց նախնական հետախուզական աշխատանքի և ֆիզիկո-մեխանիկական փորձարկման:

Երևան քաղաքի շինարարության համար նախկինում, բազալտային լավայի հանույթը կատարվում էր Կոմերիտմիութեան:

թյան անվան գրուայգու շրջանում: Ալժմ բազալտային և անդեղիտո-բազալտային լավաների հիմնական քարհանքերն են հանդիսանում Նորքինը և Փարաքարինը, որտեղ աշխատանքները լրիվ մեքենացված են:

Անդեղիտի հանուցիքը առաջներում մեծ չափով կատարվում էր Կապուտանում: Կապուտանի անդեղիտներից է կառուցված օրինակ՝ Ռեսպուբլիկայի Կառավարական տան խարսխային մասը: Սակայն, ուսումնասիրությունները պարզել են, որ Կապուտանի անդեղիտները հեշտությամբ հողմնահարվում են և պիտանի շեն այդ նպատակի համար:




Լիպարիտային կազմի ապարներ

Լիպարիտային լավաները հանդիսանում են գրանիտա-յին մագմայի էֆֆուզիվ տարատեսակները:


Ինքը՝ լիպարիտը ներկայացնում է մի ապար, որի հիմնական մասը կազմում է հրաբխային ապակին նրա մեջ ներփակված կվարցի և այլ միներալների մանր բյուրեղներով: Բյուրեղային ներփակումներից զերծ լիպարիտային կազմի լավաների լրիվ ապակյա տարատեսակներն են հանդիսանում զանազան տեսակի օբսիդիանները, պերլիտը:

Օբսիդիանը կամ ինչպես ժողովուրդը երբեմն անվանում է «սատանի եղուազը» շատ նման է սովորական ապակու զանգվածի և տարբերվում է նրանից մոխրագույն, գորշ, մուգ և կամ կարմիր գույներով: Բարակ կոտրվածքներում այն կիսաթափանցիկ է, ունի սուր կտրող ջարդվածք:

Լիպարիտային խմբի ապարների քիմիական բազալորության մեջ մտնող հիմնական նյութը սիլիկահողի օքսիդն է (74—76 %): Մնացած բոլոր օբսիդների մասնակցությունը արտահայտվում է հետևյալ թվերով՝



Ինչպես տեսնում ենք բազալտային խմբի ապարների համեմատ, լիպարիտային կազմի լավաները աղքատ են երկաթով, մագնեզիումով, կրաքարով և ընդհակառակը հարուստ են սիլիկահողով և ալկալիներով:



Նկ. 5. Արտենի հրաբխային լեռը, կազմված լիպարիտային բաղադրության լավաներից լուսանկար՝ հեղինակի

Ի տարբերություն բազալտների, լիպարիտային լավաները վերին աստիճանի մածոցիկ են և դժվարությամբ են հոսում, որի հետևանքով լավային ծածկոցների փոխարեն առաջացնում են բարձր գմբեթաձև գոյացումներ՝ և մասսիվներ:


Լիպարիտային լավաները Հայաստանում ունեն մեծ տարածում: Այդ լավաների տարատեսակներով են ներկայացված Հաղիս լեռը Հրազդանի շրջանում, Արտենի լեռը՝ Թալինի շրջանում, Գեղամա լեռների ջրաբաժանում՝ Գեղասարը և Սպիտակասարը: Նման գոյացումներ հայտնի են նաև Ծաղկունյաց լեռնաշխարհում, Զերմովկի սարահարթում և այլ վայրերում:

Լիպարիտային կազմի ապարների խմբում վերջին տարիներս մեծ կիրառում են գտիլ ապակյա տարատեսակները՝ օրսիդիանները, որոնց կիրառման բնագավառը բավականին ընդարձակ է: Այն կիրառվում է որպես հղկող նյութ, հումք ապակու արդյունաբերության մեջ, փոքրիկ նրբագեղ իրերի և դարդաքարերի պատրաստման գործում:

Անցյալում օրսիդիանը կիրառվել է դեռ նախամարդու կողմից զանազան քարե գործիքներ և նետերի ծայրականներ պատրաստելու համար: Հնագետ Ս. Սարդարյանը և այլ ուսումնասիրողներ, Հայաստանի տարբեր շրջաններում հավաքել են քարե դարի՝ պալեոլիթի հարյուրավոր քարե գործիքներ:

Օրսիդիանների կիրառման հիմնական բնագավառը դա շինարարությունն է: Շինարարության մեջ օգտագործվում է օրսիդիանների այն տարատեսակը, որը կոչվում է պերլիտ: Պերլիտը դա այն օրսիդիանն է, որը պարունակում է մի քանի տոկոս բյուրեղային զուր: Բարձր զերմաստիճանի պայմաններում պերլիտով գտնվող բյուրեղային զուրը մանր ծակոտիների մեջ ներփակված գաղերի հետ միասին լայնանում է, 10—12 անգամ մեծացնելով ապարի ծավալը: Այս ձևով ստացված ուռմեցված պերլիտը օգտագործվում է թեթև բետոններ ստանալու, ինչպես նաև մի շարք հրակայում, զերմամեկուսիչ, էլեկտրամեկուսիչ նյութերի արտադրության բնագավառում:

Արտասահմանում (ԱՄՆ, Անգլիա, Իտալիա) վերջին տարիների ընթացքում պերլիտի օգտագործումը թեթև բետոնների և բնածեփի ստացման համար մեծ կիրառում է գտել:



Նկ. 6. Պերլիտի մեքենայացված հանույթը Ֆոնտանի հանքավայրում:

Լուսանկար՝ Հեղինակի

ՍՍՌՄ-ում հայտնի արդյունաբերական մեծ պաշարներով ջրավարունակ հրաբխային ապարների հանքավայրերի զգալի մասը գտնվում է Հայաստանում:

Թեթև բետոնների ջերմատեխնիկական հատկությունները թույլ են տալիս փոքրացնելու շենքերի պատերի հաստությունը և շինարարական կոնստրուկցիաների ընդհանուր քաշը:

Յոթնամյա պլանով նախատեսնված կոմունալ և արդյունաբերական շինարարության մեծ թափը և դրա հետ միասին շինարարական մեթոդների ինդուստրացումը մեծ հեռանկարներ են ստեղծում պերլիտային բետոնի օգտագործման համար:

Վերջին մի քանի տարում Հայաստանում հետախուզված են պերլիտի մի շարք հանքավայրեր: Միայն երեք հանքավայրերի (Հաղիս, Արտենի, Գուգգունլու) առանձին գոտիներում արդին հաշվված են ավելի քան 400 մլ. մ³ պերլիտի պաշարներ և համապատասխան տեխնոլոգիական փորձարկումներով հաստատված է հումքի բարձր շինարարական հատկությունները:

Հայաստանում կազմակերպվող պերլիտի արդյունահանումը կարող է բավարարել նաև Միության մի շարք այլ քաղաքների պահանջները փոխարինելով մի շարք ավելի թանկարժեք շինանյութերի:

Հրաբեկորային շինանյութեր

Ինչպես մենք նշեցինք ջրային գոլորշիների և գազերի առկայությունը մագմայում և հրաբխային երեսութները պատճառ են հանդիսանում հրաբեկորային նյութի առաջացմանը: Հրաբեկորային ապարները կարող են ունենալ տարեր քիմիական բաղադրություն, բայց նրանց դասակարգման հիմքում դրված է բեկորային նյութի մեծությունը:

Տարբերում են հրաբխային փոշի և մոխիր, որոնք ներկայացնում են իրենցից լավայի ամենամանրահատիկ մասնիկները: Ավելի խոշորահատիկ բեկորային ապարները ներկայացված են հրաբխային ավագով, իսկ ավելի մեծերը՝ մո-

տավորապես սիսեռի մեծությունից սկսած մինչև ընկույզի շափի հասնող բեկորները կոչվում են լապիլներ: Տարբերում են նաև ավելի խոշորահատիկ բեկորային ապարներ՝ հրաբուխին խառամ և պեճզա, հրաբխային ոռոմքեր և գուղձեր: Բոլոր նշված ապարները, որոնց պետք է ավելացնել նաև բեկորային նյութերի «Ճուղված» տարատեսակներ՝ հրաբխային տուֆերը, Հայաստանում մեծ տարածում ունեն:

Ծինարարության մեջ ծակոտկեն ապարների այս խոսմբը՝ արհեստական ձևով ստացվող պերլիտային պեմզայի հետ միասին, օգտագործվում է, որպես բետոնի և երկաթբետոնի կցորդ:

Բնական և արհեստական ծակոտկեն լցորդներից ստացված բետոնը ունի մի շարք առավելություններ, որը և պայմանավորում է հումքի այս տիպի տարեցտարի աճող պահանջները շինարարության ամենաբազմազան բնագավառներում: 1965 թ. Սովետական Միությունում ծակոտկեն լցորդների ընդհանուր պահանջը կհասնի 85 մլ. մ³:

Հայաստանում տարածված ծակոտկեն լցորդների բազմազանությունը հնարավոր է դարձնում ստանալ 1800—800 կգ մ³ ծակալային կշիռ ունեցող բետոններ 50-ից մինչև 500 կգ/սմ² սեղման դիմադրողականությամբ: Ծակոտկեն, բեկորային շինանյութերի պաշարները Հայաստանում շափակում են միշտարդ խորանարդ մետրերով և տեղադրման պայմանները միանգամայն բարենպաստ են օգտագործման համար:

Օգտագործման շահավետությունը ակնառու է նաև մեր ռեսպուբլիկայի սահմաններից դուրս, եթե շինանյութի տեղափոխման հեռավորությունը չի գերազանցում 1500 կմ, երկաթուղային տեղափոխումների ժամանակ և 2500 կմ՝ խառը, երկաթուղային և ջրային, տեղափոխումների դեպքում:

1965 թվականին, միայն պեմզայի և խառամի հանույթը Հայաստանում կկազմի 2,5 մլ. մ³, որի գգալի մասը կարտահանվի Միության մյուս տնտեսական շրջանները:

Պեմզա, պեմզային ավագ և հրաբխային մոխիր

Պեմզան, կամ ինչպես այն հաճախ անվանում են շեշաքարը, Հայաստանում տարածված է հիմնականում Արագած լեռան շրջակալքում, առանձին հանքավայրեր հայտնի են նաև ոհսպորդիկայի այլ շրջաններում:

Պեմզան ամբողջապես կազմված է հրաբխային ապակոց, որը հարուստ լինելով ծակոտիներով նման է կարծրացած փրփուրի կամ սպունգի: Բարձր ծակոտկենությունը պայմանավորում է պեմզաների ցածր ծավալային կշիռը, որը տատանվում է 0,3—0,85 սահմաններում: Հայաստանում պեմզաները ներկայացված են սպիտակ, մոխրագույն, դեղին և նույնիսկ սև գույներով: Պեմզայի գույնը պայմանավորվում է նրա մեջ պարունակվող երկաթի և այլ օքսիդների առկայությամբ:

Պեմզայի առաջացումը տեղի է ունենում այսպես կոչված պլինեյան տիպի հրաբխային ժայթքումների ժամանակ: Այս տիպի յուրաքանչյուր ժայթքմանը նախորդում է հրաբխի երկարատև հանգիստը, որի ժամանակ մագմատիկ ավազանի վերին մասում տեղի է ունենում թեթև սիլիկատային հալոցքի կուտակում գաղերի և ջրային գոլորշիների հետ միասին: Հրաբխի ժայթքման ժամանակ, որը կրում է կատաստրոֆիկ բնույթ, օդ են շպրտվում հրահեղուկ լավայի կտորներ, որոնց մեջ գտնված գաղերը, արտաքին ճնշման գգալի նվազման հետևանքով, ազատ կերպով լայնանում են առաջացնելով զանազան ձևի պղպջակներ, մանր խոռոշներ և խողովակաձև մանր զատարկություններ: Գաղերի հեռացումից և բեկորային նյութի լրիվ սառչելուց հետո ստացվում է ծակոտկեն թեթև ապար՝ պեմզա:

Պեմզան կարող է առաջանալ նաև արտավիժմած թթու լավայի ձևափոխումից, եթե վերջինս հարուստ է գաղերով: Իրենց քիմիական կազմով Հայաստանում տարածված պեմզաները ներկայացնում են լիպարիտային լավայի բեկորային տարատեսակներ: Պեմզայի որակը և արժեքավորությունը բնորոշվում է ցածր ծավալային կշիռով, սպիտակ գույնով, կտորների մեծությամբ և լրիվ ամորֆ կառուցվածքով: Երբ

պեմզայի առաջացման պրոցեսը չի ընթանում մինչև լավայի լրիվ ձևափոխումը, առաջանում են միջանկյալ տիպի ապարներ նման ինչպես պեմզայի, այնպես էլ լավայի, այսպիսի պեմզաները կոչվում են լիթոդային, այսինքն քարանման: Լիթոդային պեմզաները նվազ ծակոտկին են, ոման մեծ ծավալային կշիռ և զերծ չեն բյուրեղային ներփակումներից:

Պեմզան, պեմզային ավագի և մոխրի հետ միասին լայն կիրառում է գտել ինչպես շինարարության մեջ, այնպես էլ արդյունաբերության մի շարք այլ ճյուղերում: Պեմզան օգտագործվում է որպես ֆիլտրող, հղկող և ողորկող նյութ: Այն լայնորեն օգտագործվում է կաշվի, ռետինի, ապակու և հախճապակու արդյունաբերության մեջ: Շինարարության մեջ պեմզան օգտագործվում է պեմզաբլոկի պատրաստման համար, որպես լցորդ՝ թեթև է ջերմամեկուսիչ բետոններում, ինչպես նաև հիդրավլիկական ցեմենտի արդյունաբերության մեջ:

Պեմզայի որոշ տեսակներ օգտագործվում են տրավես թրվակայուն և հրակայուն նյութերի փոխարինողներ: Պեմզայի կիրառման բազմազանությունը պայմանավորում է հումքի նկատմամբ առաջարկվող գանազան պահանջներով—կտորների մեծություն, ջերմակայունություն, մեխանիկական խառնուրդների և միներալային բյուրեղների բացակայություն: Պեմզային ավագը և մոխրիը ավելի բարձր են գնահատվում այն դեպքում, եթե նրանք օժտված են լինում հիդրավլիկական հատկություններով: Այսպիսի մոխրիը և ավագը շինարարության մեջ ընդունված է անվանել պուցցոլան, իսկ նույն պարների ցեմենտացած տարատեսակները տրամաներ:

Հայաստանում պեմզայի, պուցցոլանի և տրամաների հիմնական շահագործվող հանքավայրերը գտնվում են Արագած լեռան արևմտյան (Անի-պեմզա), Հյուսիս-արևմտյան (Պեմզաշեն) ստորոտներում: Հանքավայրերի պայմանները բավականին բարենպաստ են: Կողմնակի ապարների ծածկոցի փոքր հզորությունը թույլ է տալիս հանույթը կազմակերպել բաց լեռնային աշխատանքների միջոցով, որը զգալի չափով իշեցնում է շինանյութի ինքնարժեքը: Նշված հանքավայրերում տեխնիկական և շինարարական պեմզայի հետ միասին ար-

դյունահանվում է նաև հրաբխային տուփ, իսկ Անիի հանքավայրում նաև պուցղուլան: Վերջինս մի շաբթ հանքավայրերում արդյունահանվող կրաքարերի հետ միասին օգտագործվում է ցեմենտ ստանալու համար: Ստորև բերված տվյալները արտահայտում են Անի-պեմզայի և Պեմզաշենի հանքավայրերի պեմզայի ֆիզիկո-մեխանիկական հատկությունները:

Սավալային կշիռ $0,30 - 0,51$ գր/սմ³

Սակոտկենություն $75 - 79\%$

Ջրակլանողություն $58 - 80\%$

Ճնշման դիմադրողականություն $27 - 35$ կգ/սմ²

Ճերմահաղորդականություն $0,09 - 0,13$ փոքր կալոր. մետր ժամ աստիճան

Հրակացունություն $1300 - 1400^{\circ}$.

Պեմզայի և պեմզային ավաղի խոշոր գոյացումներ Հայաստանում հայտնի են նաև Աշտարակի, Ապարանի, Հրազդանի, Գորիսի և այլ շրջաններում: Կոտայքի շրջանի Էլար գյուղի մոտ հայտնի է պեմզայի ոչ մեծ հանքավայր, որը շինարարության մեջ օգտագործվելուց բացի բավարարում է Քանաքեռի Էլեկտրոլամպերի գործարանի պահանջը սպիտակ սպակի ստանալու համար: Կոտայքի, Հրազդանի և Թալինի շրջաններում հայտնի են լիթոդային պեմզաներ, որոնք կապված են լիպարիտային լավաների հետ: Բացի վերը նշված հանքավայրերից հայտնի են հիդրավլիկական հատկություններով օժտված պեմզային մոխրի արդյունաբերական հանքավայրեր Աշտարակի, Խշկանի, Սևանի, Վեդու շրջաններում: Կրաքարի և պուցղուլանի մեծ պաշարների առկայությունը Հայաստանում միանգամայն բարենպաստ պայմաններ է ստեղծում ցեմենտի արդյունաբերության զարգացման համար:

Հրաբխային խառամ

Հրաբխային խառամը Հայաստանում այնքան մեծ տարածում ունի, որ հարկ չկա խոսելու առանձին հանքավայրերի մասին:

Խառամով են ներկայացված հարյուրավոր հրաբխային կոներ, որոնք ձգվում են մեր ռեսպուբլիկայի կենտրոնական մասի ամբողջ երկարությամբ հյուսիս-արևմուտքից հարավ-

արևելք: Մե ու կարմիր խառամով են ներկայացված գեղամա լեռնաշղթայի ջրաժանը կազմող ձունածածկ գագաթներից շատերը և նույն լեռնաշղթայի լանջերում դասավորված մի քանի տասնյակ այլ հրաբխային կոներ, որոնցից ամենից հայտնի են Արմաղանը, Երաբլուրի կոները, Բողուղաղը և այլն: Զգվելով Սևանա լճի հարավ-արևելյան ափի երկարությամբ, նրանք ներկայացնում են հարյուր հազարամյակներ առաջ խորը ճեղքվածքների վրա գոյացած հրաբխային առանձին կենտրոններ:


Խառամային կոները Հայկական լեռնաշղթայի հրաբխային ժայթքման ամենատարածված հրաբխային կմնտրոններից են և հանդիպում են ամենուրեք: Այս տեսակետից նրանց օգտագործումը որևէ գժվարության չի հանդիպում:

Ամենից հարմար են տեղադրված և առաջնահերթ նշանակություն ունեն Հոկտեմբերյանից հյուսիս-արևմուտք գրտնըվող խառամային կոները, որոնք հայտնի են «կզիլներ» անվան տակ: Շահագործման համար բարենպաստ պայմաններում են գտնվում նաև Աղինի և Թալինի շրջանների խառամի հանքավայրերը: Գտնվելով երկաթուղային մագիստրալից ոչ հեռու, նշված շրջաններում հնարավոր է խառամի հանույթի օգտագործումը նաև հարեան ուսապուրչիկանների պահանջները բավարարելու նպատակով:

Ի՞նչ է իրենից ներկայացնում խառամը կամ ինչպես է այն առաջանում:

Խառամի առաջացումը նույնպես պայմանավորվում է գաղերի և շրային գոլորշիների ներգործությամբ: Նա առաջանում է նույն ձևով, ինչ ձևով որ պեմզան: Ի տարբերություն պեմզայի, խառամը հանդիսանում է ավելի հիմքային, այսինքն սիլիկահողով համեմատաբար աղքատ և երկաթ մագնելիումային միներալներով ավելի հարուստ, լավայի բեկորացին տարատեսակ:

Հայաստանում հայտնի խառամի տարատեսակներն ունեն բազալտային, անդեղիտո-բազալտային և անդեղիտային լավաներին հատուկ քիմիական բաղադրություն: Որքան հիմքային է խառամը, այնքան մեծ է նրա տեսակարար և ծավալային կշիռը: Պեմզայի համեմատությամբ խառամը պակաս



Նկ. 7. Խառամից կաղմված Արմաղան հրաբխային սարը
Լուսանկար՝ Հեղինակի

ծակոտկեն է, ունի ավելի բարձր ծավալային կշիռ և իր շինարարական հատկություններով ավելի ցածր է գնահատվում:

Խառամի ցածր ծակոտկենությունը պայմանավորված է Հիմքային լավաների դյուրաշարժությամբ, նրանց սառեցման երկարատևությամբ: Հիմքային լավաներում գագերի հեռացումը չի ուղեկցվում հրահեղուկ նյութի անմիջական սառեցմամբ, որի հետևանքով գագերից առաջացած պղպջակները և բշտիկները արտաքին ճնշման անընդհատ աճման հետևանքով ենթակա են հետադարձ սեղման և ծավալի փոքրացման:

Այս բոլորի կողքին մեծ նշանակություն ունի մագմայում տարալուծված զրային գոլորշիների և գագերի քանակը, որոնց սակավության դեպքում անկախ լավայի քիմիական բաղադրությունից բացառվում է բեկորային նյութի առաջացումը: Որոշ պայմաններում խառացը գոյանում է նաև լավային հոսքերի մակերևույթային մասերում: Կամո քաղաքի մոտ տարածված են գորշ կարմիր գույնի խառամային լավաներ, որոնք օգտագործվում են տեղական շինարարության մեջ:

Խառամի կիրառման բնագավառը բավականին բազմագան է: Հիմնականում այն օգտագործվում է շինարարության մեջ որպես բետոնի լցորդ և ճանապարհաշինարարության մեջ: Օժտված լինելով ադսորբցիոն (կլանման) հատկություններով, խառացը օգտագործվում է նաև մի շարք նյութերի (զանգան յուղեր, նավթ, ջուր և այլն) մաքրման համար:

Ստորև բերված թվերը արտահայտում են մեր ուսապուրիկայում տարածված խառամի տարատեսակների միջին ֆիզիկո-մեխանիկական հատկությունները:

Տեսակարար կշիռ—2,70—3,00

Մակոտկենություն—40—50%

Ջրակլանողություն—40—45%

Ջերմակայունություն—1000°

Խառամից ստացվող թեթև բետոնների ճնշման դիմադրողականությունը կարող է հասնել մինչև 500 կգ սմ²: Այսպիսի բարձր դիմադրողականությունը պայմանավորվում է խառամի բարձր հիդրավիկական հատկություններով:

Խառամի և կրի խառնուրդից ստացված բետոնի պարզ

ձեմբը կիրառվել են հայկական հին ճարտարապետական շինություններում դեռ հարյուրամյակներ առաջ և իրենց պահպանվածությամբ և ամրությամբ զարժանք են պատճառում:

Խառամի անսպառ պաշարները Հայաստանում մեծ հնարավորություններ են ստեղծում այդ արժեքավոր շինանյութի բազայի վրա թեթև բետոնի արդյունաբերության զարգացման և շինարարական մեթոդների ինդուստրալիզացիայի համար:

Տուֆեր և տուֆոլավաներ

Հրաբխային տուֆը իրենից ներկայացնում է ցեմենտացած կամ «ձուլված» հրաբեկորային նյութի մի ամբողջականություն:

Տուֆերի հիմնական մասսան կազմված է հրաբխային մոխրից կամ ավազից, որոնց մեջ ներփակումների ձևով գրանցվում են զանազան միներալների բյուրեղներ, լավայի մեծություրներ և այլ ապարների բեկորներ: Տուֆերի կազմում գտնվող բեկորային նյութի հիմնական մասսան մարդիկներու պատճառով նշմարվում է միայն մանրադիտակի տակ:

Տուֆոլավաները (այսպես են կոչվում Արմիկի տիպի վարդագույն տուֆերը) ներկայացնում են տուֆերի և լավաների անցողիկ ձևեր:

Տուֆոլավաների հիմնական մասսան, ի տարբերություն տուֆերից, կազմված չէ հրաբխային մոխրից կամ ավազից, այլ ներկայացված է խիստ ծակոտկեն լավային զանգվածով, որի մեջ տեղաբաշխված են պեմզայի և խառամի ներփակումներ, հին ապարների բեկորներ և զանազան միներալներ:

Տուֆերը և տուֆոլավաները ներկայացնում են սիլիկանողով հարուստ անդեղիտային, դացիտային և լիպարիտո-դացիտային լավաների բեկորային տարատեսակներ:

Տուֆի առաջացումը կապվում է Հայկական բարձրավանդակի հրաբխային գործումներության հետ, որի հետեւանքով երկրի ընդերքից դուրս է շպրտվել մի քանի տասնյակ հազար խորանարդ մետր մանր բեկորային նյութ: Վերջինս մի քանի մետրի հասնող շերտի միջին հաստությամբ ծածկել է մերսեսպուրիկայի տերիտորիայի 1/4-ից ավելին: Առանձին վայ-

րերում տուֆաքարի շերտի հաստությունը հասնում է մի քանի
տասնյակ մետրի:


Տուֆերի առաջացման ժամանակ մադման գերհագեցած
է լինում գաղերով և ջրային գոլորշիներով, որոնց բուն
անշատումը մագմայից սկիզբ է տալիս հրաբեկորային նյու-
թերի առաջացմանը: Հրաբեկորային գաղերը գուրս գալով երկրի
մակերեսույթ, այնքան են ծանրաբեռնված լինում մանր բեկո-
րային նյութով, որ ի վիճակի չինելով վեր բարձրանալու,
կրակի հեղեղի ձեռվ մեծ արագությամբ (մինչև 150 մ/վրկ)՝
խոյանում են ցած, լցնելով շրջապատի անհարթությունները:
Հրաբեկորային լավայի նստեցման մեծ արագությունը բացա-
սում է նյութի արագ սառեցումը, որի հետևանքով և տեղի է
ունենում մասնիկների միմյանց հետ խտացում ձուլում՝ այ-
սինքն տուֆաքարի առաջացում:

Աստիճանական սառեցման ընթացքում օդի թթվածինը
ուեակցիայի մեջ է մտնում տուֆային մասսայում գտնվող
երկաթի հետ, որի տարբեր աստիճանի օքսիդացումից ստաց-
վում են կարմիր, շադանակագույն և այլ գույնի տուֆեր:

Որքան մեծ է տուֆային շերտի հզորությունը և որքան
այն դանդաղ է սառըում, այնքան օքսիդացման պրոցեսները
խորն են թափանցում: Մեծ հաստության շերտերի ստորին
մասում, որտեղ օքսիդացման ուսակցիաներ տեղի չեն ունե-
ցել, տուֆը պահպանում է իր սկզբնական սե գույնը: Այս-
պիս են առաջացել կենինականի, երևանի և այլ վայրերի
սե և կարմիր տուֆերը, որոնք հայտնի են Երևան-կենինա-
կանի տիպի տուֆեր անվան տակ:

Արագած կեռան հարավային շրջաններում տարածված են
այսպես կոչվող «բոցանախչ» տուֆերը: Այս անունը տուֆե-
րին տրվել է այն պատճառով, որ նրանք իրենց մեջ պարունա-
կում են բոցի լեզվակներ հիշեցնող սե լավային ներփակում-
ներ: Բոցանախչ տուֆերի հանույթ մեզ մոտ կազմակերպված
է Բյուրականում: Այս տուֆից կառուցված է ՀՍՍՌ գիտու-
թյունների ակադեմիայի նախագահության շենքը, Բյուրա-
կանի աստրո-ֆիզիկական դիտարանը, Առնատրի տունը Երև-
անում և այլ շենքեր:

Շինարարության մեջ մեծ կիրառում ունի նաև տուփերի մի այլ տեսակը՝ Անիի տիպի պեմզային տուփը։ Անիի տիպի տուփերը ներկայացված են գեղին գույնով և հարուստ են պեմզային ներփակումներով։



Նկ. 8. Հառիճի վանքը Արթիկի շրջանում կառուցված է VII—XIII դ. գ. ընթացքում տեղական տուփից
լուսանկար՝ հեղինակի

Այս տիպի տուփերից է կառուցվել հայկական հնագույն քաղաքներից մեկը՝ Անին։ Անիի տիպի տուփից է կառուցված

Երևանի երկաթուղային կայարանը, խորեսքաֆիլ ուսումնարանը և մի շաբթ այլ շենքեր:

Եինարարության մեջ առանձնապես մհծ կիրառում են գտել Արթիկի տիպի տուփերը (տուփոլավաները): Արթիկի տուփոլավաներով են կառուցված և երեսպատված երևանի, Լենինականի, Կիրովականի շենքերի զգալի մասը: Նույն քարից է կառուցված թեթև արդյունաբերության մինիստրության շենքը Մոսկվայում: Հայաստանում տարածված տուփոլավաների ֆիզիկո-մեխանիկական առանձնահատկությունների միանգամայն դրական ցուցանիշները պայմանավորում են նրանց բարձր շինարարական հատկությունները: Մոտրե տեղադրված աղյուսակում բերված են Հայաստանի ճրարխային տուփերի հիմնական ֆիզիկո-տեխնիկական ցուցանիշները:

Ինչպես երևում է բերված աղյուսակից արթիկի տիպի տուփերը (տուփոլավաները) ունենալով բավականին ցածր ծավալային կշիռ ($0,67-1,73$) ունեն բավարար ամրություն: Օժտված լինելով բարձր ծակոտիկնությամբ, տուփոլավաները ունեն որոշակի փափկություն, որի հետևանքով, հեշտությամբ մշակվում են, սղոցվում սովորական սղոցով և նույնիսկ մեխալիզմի ինչպես տակտակ: Մեկ մոտ տարածված բոլոր ճրարխային տուփերը օժտված են բարձր ցրտակայունությամբ և հողմանաբար դիմացիոնությամբ:

Տուփերին և տուփոլավաներին հատուկ է բարձր ջերմակայունություն, որը տատանվում է $1100-1350^{\circ}$ -ի սահմանականություն: Ունենալով ալեխի ցածր ջերմակայունություն քան շամուտային աղյուսը, վերջիններիս նկատմամբ տուփերն ունեն այնպիսի առավելություններ, ինչպես օրինակ ցածր ծավալային կշիռ և անհրաժեշտ ամրություն, զանազան տեխնիկական շլակների նկատմամբ բարձր իներտություն, փոքր ջերմահաղորդականություն, գծային լայնացման ցածր գործակից և այլն:

Այս հատկությունները հնարավոր են դարձնում թանկարժեք շամուտային աղյուսի փոխարեն տուփերի և տուփոլավաների օգտագործումը հնոցների, շոգեկաթսաների, նավթային արդյունաբերության ջերմային աղբեղատների արտաքին շեր-

Հայկական ՍՍԾ հրաբխային տուֆերի հիմնական ֆիդիկուտինիկան ցուցանիշները.

Տուֆի տեսակը	Տեսակաբառ կշիռը	Ծագալային կշիռը	Իրական ծակոտկե- նությունը $\theta/_{\theta}$	Զբակչանման ունակու- թյունը $\theta/_{\theta}$	Ճնշման դի- մագրողակա- նութ. չոք վիճակում $\theta/_{\theta}$	Փորձար- կութերի քանակը
1. Արթիկի տիպի տուֆ կամ տուֆուլավա	2,42—2,60	0,67—1,78	29,43—72,93	9,06—53,15	14—397	180
2. Երևան-Լինինական տիպի տուֆեր (այդ թվում և Ա- նիկ տիպի պեմզային տու- ֆերը)	2,42—2,55	1,36—1,95	20,88—41,65	4,87—26,94	92—582	140
3. «Բոցանախ» տուֆեր . . .	2,48—2,53	1,68—2,32	6,83—33,70	2,69—15,54	163—577	100

տերուս որպես ջերմամիկուսիչ նյութ, ինչպես նաև արյուրա-
հալ, կոքսային և ապակեծովման վառարաններում:

Տուֆերի և տուֆոլավաների կիրառման հիմնական բնա-
դավառը արդյունաբերական և կոմունալ շինարարությունն է:
Հարկ չկա նշելու այն հսկայական նշանակությունը, որ ունեն
տուֆերը և տուֆոլավաները այդ ասպարեզում:

Մեր ուսապուրիկայի մայրաքաղաք Երևանը իր յուրօրի-
նակ գեղեցկությամբ կառուցված է զանազան գույնի տուֆե-
րից և տուֆոլավաներից:


«Զեր Երևանը նման չէ ինձ ծանոթ քաղաքներից ոչ մեկին:
Նա կառուցված է բազմագույն տուֆից և արդեն դա նրան ան-
կրկնելի յուրահատկություն է հաղորդում: Ինձ ասացին, որ
Դուք ոմնեք այդ հիանալի նյութի հսկայական պաշարներ: Դա
ժողովրդական մեծ հարստություն է, և այն պետք է թանկ
գնահատել և շատ հմտորեն և նպատակահարմար օգտագոր-
ծել: Հրաշալի քար է այս տուֆը, դուք երջանիկ եք, որ ունեք
այսպիսի հիանալի շինանյութ»:

Այս գնահատականը տվել է ընկ. Կ. Ե. Վորոշիլովը հայ-
կական տուֆին, ուսապուրիկային կենինի շքանշան հանձ-
նելու առթիվ Երևանում գտնվելիս:

Ընկ. Կ. Ե. Վորոշիլովը նշել է նաև, որ ունենալով այդ-
պիսի ամուր և գեղեցիկ շինանյութ և այնպիսի լավ շենք կա-
ռուցողներ, ինչպիսիք հայ շինարարներն են, մենք կարող ենք
կառուցել ավելի ու ավելի շատ լավ բնակելի շենքեր ոչ միայն
քաղաքներում, այլև գյուղերում:

Հրաբխային տուփի հանուցիթը կատարվում է մեր ուս-
պուրիկայի բազմաթիվ հանքավայրերում, որոնցից ամենա-
նշանավորը Արթիկի հանքավայրն է: Հանքավայրը տեղադրո-
ված է Արթիկ շրջկենտրոնի մոտ, կենինականից հարավ-արե-
վելք, որի հետ կապված է 26 կմ երկարության երկաթգծով:
Տուփի հանուցիթը կատարվում է առանձին տեղամասերում,
որոնք գտնվում են Արթիկի, Պեմզաշենի, Տուֆաշենի և Հառիճ
բնակավայրերի շրջաններում: Արթիկի հանքավայրում տու-
ֆոլավայրից բացի, որը շահագործման հիմնական աղբյուրն
է, կատարվում է նաև Երևան—կենինականի տիպի տուփի
հանուցիթ: Հանքաշրջանի օգտակար մակերեսը 250 կմ² է: Տուփի

Հանուլյթը Արթիկի հանքավայրում կատարվում է մի քանի
հարյուր մետր երկարություն ունեցող առանձին քարհանքնե-
րում: Աշխատանքների զգալի մասը մեքենայացված է: Ա-
ռանձին տեղերում կազմակերպված է պահանջվող ձևի և չափ-
սի քարի անմիջական հանուլյթ, որը իրագործվում է հատուկ
կտրող մեքենաների միջոցով: Այս միջոցով ստացվող քարը
առանց հետագա մշակման և հղկման կարող է օգտագործվել
պատի շարվածքում կամ երեսպատման համար:



Նկ. 9. Տուֆի մեքենայացված հանուլյթ (սղոցում)

Արթիկի հանքավայրում

Լուսանկար՝ Է. Գ. Մալխասյանի

Տուֆի տեղափոխումը քարհանքից մինչև բեռնավորման
կառամատուցը լրիվ մեքենայացված է և իրագործվում է
մոտոքարշերով և ավտոմեքենաներով:

Հանքավայրի շրջանում արագ թափով կատարվում է յոթ-
նամյակի նորակառուցներից մեկի՝ արհեստական տուֆորլոկ-
ների գործարանի կառուցումը, որի շինարարությունը ծավալ-
վել է 25 հեկտար տարածության վրա: Գործարանն աշխատե-
լու է տուֆի հանուլյթի ժամանակ ստացվող մանրութի բազայի
վրա: Որպեսզի պարզ լինի թե դա ինչ տնտեսում կտա պետու-

թյանը և որքանով է այն ձեռնտու, անը բաժեշտ է նշել, որ քարի մանրութների մնացուկը հանույթի ժամանակ հանքավայրում կազմում է 40%:

Գրոծարանի շահագործումը հնարավոր կդարձնի «Արթիկտուֆի» տարեկան արտադրանքը հասցնել մեկ միլիոն խոր. մետր քարի, որը համարժեք է 500.000.000 հատ շինարարական աղյուսի:

Արթիկ տուֆի օգտագործումը շինարարության մեջ տնտեսապես իրեն արդարացնում է նաև մեր ոեսպուրիկայի սահմաններից դուրս: Այդ մասին են վկայում ստորև բերված թվերը:

Տարածութ. կմ ²	1 մ ³ տուֆի արժեքը ոուրիներով			1 մ ³ կերամ-գիտի միջին արժեքը (ոուրիներով)
	գաճառման գինը	տեղափոխ- ման ծախսը	ընդա- մենը	
Թրելիսի 247 . . .	1,40	1,78	3,18	7,5
Ռուսով Դոնի գրա 1492 . . .	1,40	2,98	4,38	7,5
Մուկվա 3686 . . .	1,40	5,89	7,29	7,5

(Աղյուսակում բերված արժեքները համապատասխանում են միջանցուկ՝ խառը երկաթուղային և ջրային տեղափոխումների տարիվներին):

Այսպիսով 3000 կմ ավելի տեղափոխումներից հետո Հայաստանից ստացվող տուֆը ունի ավելի ցածր ինքնարժեք քան տեղական արհեստական շինանյութի՝ կերամզիտի արժեքը: Այս պատճառով էլ պատահական չէ այն հանգամանքը, որ մեր հանքավայրերից ամեն օր Միության տարբեր քաղաքներն են ուղարկվում տուֆորարով բեռնված բազմաթիվ վագոններ: Առանձնապես մեծ պահանջ է ներկայացվում Արթիկի տուֆուլավաների նկատմամբ: Արթիկի տուֆից պատրաստած շենքեր կարելի է տեսնել Թրիլիսիում, Սուխումիում, Սոչիում, Օդեսայում, Վոլգոգրադում, Զապրոյտյում:

Այժմ Արթիկի տուֆուլավաների հանույթ կատարվում է նաև Թալինի, Աղինի և այլ շրջաններում, որտեղ կան այդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱՄԱՅԻՆ
ՇԻՆԱՅՈՒԹԵՐԻ ՏԵՂԱՐԿԴԻՄԱՆ
ՔԱՐՏԵԶ



քարի հսկայական պաշարները: Հնայած դրան Արթիկի հանքավայրը մնում է ռեսպուբլիկայի քարի հանուլիքի ամենախոշոր հանքավայրը: Տուփի հանուլիքը այսուեղ տարեցտարի ավելանում է: Եթե տուփաքարի ընդհանուր հանուլիքը 1935 թ. կազմում էր 73՝ հազ. մ³, 1948 թ. 123 հազ. մ³, 1959 թ. այն հասավ 400.000 մ³:

Հայաստանի խոշորագույն հանքավայրերից է նաև Անդաման, որտեղ տուփից բացի կատարվում է պեմզայի և հրաբխային մոխրի հանուլիք: Վերջինիս բազայի վրա տեղում կազմակերպված է ցեմենտի արդյունաբերություն:

Մեծ չափով տուփի հանուլիք կատարվում է նաև Երևանի մերձակայքում՝ Ավանում և Ջրվեժում: Տուփի խոշորագույն հանքավայրերից է նաև Կարմրաշենը (Հոկտեմբերյանի շրջանում): Մեծ չափով սև տուփի հանուլիք է կազմակերպված նաև Կիրովականի և Սպիտակի շրջաններում:

Հայաստանի տուփերի մասին խոսելիս չի կարելի աշխաթող անել այսպիս կոչված ֆելզիտային տուփերի խոսմբը: Ֆելզիտային է կոչվում տուփերի այն խումբը, որին յուրահատուկ է միկրոբյուրելային, կամ ֆելզիտային ստրոկատուրան և բաղկացած է գլխավորապիս կվարցի և ալյումո-սիլիկատային միներալների նուրբ և անբաժանելի կազմիցներից: Ֆելզիտային ստրոկատուրան առաջանում է հրարսիմային ապակու մասնակի վերաբյուրեղացումից, որը տեղի է ունենում ժայթքումներից հետո: Ֆելզիտային տուփերը հայտնի են գլխավորապիս հյուսիսային Հայաստանում՝ Ալավերդու, Նոյեմբերյանի, Կիրովականի և Կալինինոյի շրջաններում: Առաջացման ժամանակի տեսակետից նրանք շատ ավելի հիմնեն և ունեն 30—40 միլ. տարվա հասակ: Լինելով այսքան հիմն նրանք իրենց վրա են կրել ժամանակի աղղեցությունը, ձևափոխվել են, խիստ քայլայվել վերին շերտերում կամ կարբոնատացվել: Այս տեսակետից ֆելզիտային տուփերի հանուլիքի ժամանակ անհրաժեշտ է ցուցաբերել հատուկ գուշտություն, խուսափելով քայլայված կամ արագ քայլայման ենթակա տարատեսակներից: Ցավոք սրտի այս հանգամանքի վրա անհրաժեշտ ուղաղրություն չի դարձնում: Շատ անգամ շարվածքի մեջ օգտագործվում են անորակ քարեր:


Օրինակ՝ ժողանախորհի շենքի վրա Սվերդլովի փողոցի կողմից կարելի է տեսնել թե ինչպիսի խորը փոփոխությունների է ենթարկվել ֆելզիտային տուֆը անձրևային ջրերից։ Մինչդեռ նույն տուֆի լավորակ տեսակները, ինչպես ցուց են տալիս հին շինությունների ուսումնասիրությունները, հարյուրամյակների ընթացքում ոչ մի փոփոխություն չեն կրել։

Հայաստանում հայտնի ֆելզիտային տուֆերը ներկայացված են զանազան գույներով՝ կարմիր, վարդագույն, դեղին, կանաչ, սպիտակ և բավականին գեղազարդ են։ Գույնը հիմնականում պայմանավորված է տարբեր օքսիդների պարունակությամբ։

Կալինինոյի շրջանի Շահնաղարի հանքավայրում երկաթի օքսիդների պարունակությունը կազմում է՝ սպիտակ ֆելզիտային տուֆերում $0,25\%$, դեղինում՝ 21% , իսկ կարմիրում՝ մինչև $37,57\%$ ։ Շահնաղարի կարմիր ֆելզիտային տուֆից ստացվում է բարձր որակի կարմիր ներկ, որը իր որակով շի վիճում օիրային և մումիային։ Ներկը կայուն է և երկար ժամանակ շի խոնանում արեի և մինուրտային տեղումների ներգործությունից։ Անի բավարար ցրտակայունություն, դիմանում է մինչև 500° ջերմության, ինչպես նաև թթուների և հիմֆերի ներգործության։ Վերջին ժամանակներս պարզվել է նաև, որ Շահնաղարի կարմիր տուֆերը անփոխարինելի լցանցութ են հանդիսանում որոշ տեսակի պլաստմասսաներ ստանալու համար։

Լուրեցկի պլաստմասսայի գործարանի ինժեներները և կոնստրուկտորները ավատոմորիլային դեկերի համար ստացվող պլաստմասսաների համար նպատակահարմար են գտել Շահնաղարի քարի օգտագործումը։ Եթե նախկինում կիրառվող նյութերը չէին դիմանում բարձր և ցածր ջերմաստիճանների, տալիս էին ճեղքվածքներ, ապա Շահնաղարի կարմիր տուֆերից ստացվող պլաստմասսաները -50° -ից մինչև $+50^{\circ}$ ջերմության պայմաններում կայուն են և փոփոխության չեն ենթարկվում։

Շինարարության մեջ ֆելզիտային տուֆերը օգտագործվում են շենքերի երեսպատման և ներքին ձևավորման հա-



Նկ. 10. Երևանի հառավարական տան շենքը Լենինի հրապարակում՝ Երևալատված
ֆելզիտային տուֆով
Լուսանկար՝ հեղինակի

մար: Դեղին ֆելզիտային տուփով է ձևավորված Հայկ. ՍՍՌ-ի Գերագույն սովետի նիստերի դահլիճը:

Ֆելզիտային տուփի հանույթ մեզ մոտ կատարվում է Ալավերդու շրջանում Ծաթեր և Թումանյան գյուղերի մոտ, Եահնազարում, Քերփիլում (Նոյեմբերյանի շրջան) և այլ տեղերում: Դեռ 17—18 դդ. Ծաթերի հանքավայրի տուփը սայլերով տարվել է Թրիլիսի՝ Սիոնի տաճարի երեսպատճան համար:

Ֆելզիտային տուփի զանազան տարատեսակները օգտագործված են երևանի Լենինի հրապարակի վրա կառուցված վարչական շենքերի՝ կառավարական տան, պատմության թանգարանի, Ժողովնախորհի և «Հայաստան» հյուրանոցի ձևագործան համար:

Այստեղ օգտագործված տուփերի բազմազանությունը և շենքերի ճարտարապետական բարձր արվեստը, մայրաքաղաքի հրապարակին հաղորդում են անկրկնելի գեղեցկություն: Ֆելզիտային տուփի զանազան տարատեսակներից են կառուցված նաև Հայաստանի կոմարտիայի կենտրոնական կոմիտեի, երևանի պետական համալսարանի, դերասանների ու պետքանկի բնակելի շենքերը և բազմաթիվ այլ շինություններ:

Հայաստանի ֆելզիտային տուփերի հիմնական հանքավայրերը գտնվում են բարենպաստ պայմաններում՝ Երևան—Թրիլիսի երկաթգծին մոտ, հեշտությամբ շահագործվում և մշակվում են:

2. ԽՆՏՐՈՒԽՆԻՎ ԾԱԳՄԱՆ ՇԻՆԱՅՆՈՒԹԵՐ

Խնտրուզիվ կամ խորքային հրաբխականությունը Հայաստանի երկրաբանության պատմության մեջ մեծ տեղ է զբանավում: Սակայն, պետք է նշել, որ շնորհիվ էֆֆուզիվ ժագման շինանյութերի շափազանց մեծ տարածմանը, նրանց լայն կիրառմանը և շահավետությանը, ինտրուզիվ ապարների պահանջը շինարարության մեջ մեզ մոտ Հայաստանում անհամեմնատ սահմանափակ է:

Հայաստանում հայտնի են ինտրուզիվ ապարների ամենաբազմազան տարատեսակները, բայց շինարարության մեջ մեծ կիրառում են գտել միայն գրանիտային խմբի ապարները: Գրանիտային ինտրուզիվաների զգալի մասը գտնվում են երկաթուղային գլխավոր ճանապարհների մոտ, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում նրանց շահագործման համար:

Այդպիսիների թվին են պատկանում Հյուսիսային Հայաստանում Փամբակի (Կիրովականի շրջան), Կողբի (Նոյեմբերյանի շրջան), Համապատի (Ալավերդու շրջան) գրանիտային մասսիվները և Մեղրինը՝ Հարավում:

Սակայն նշված ինտրուզիվ մասսիվներից շահագործվում են միայն Փամբակի ինտրուզիվ մասսիվի ապարները: Փամբակի հանքավայրը գտնվում է նույնանուն կայարանի և գետի հովտի երկու կողմերում, բռնում է 12 կմ² տարածություն: Հանքավայրը հայտնի է դեռ 1880 թ., սակայն հանույթը առաջներում եղել է բավական անշահան: Հանքավայրը շահագործվում է բաց լեռնային աշխատանքներով, մեքենայացված ձևով: Փամբակի մասսիվից ստացվում են մեծ բլոկներ, սալաբարեր և խիճ: Փամբակի շինանյութը օգտագործվում է որպես երեսպատման քար, ճանապարհաշինարարության մեջ, հիդրոտեխնիկական կառուցցներում և քանդակագործության մեջ:

Գրանիտի տեսակարար կշիռն է 2,7, ծավալայինը՝ 2,6, ծակոտկենությունը՝ 1,5 %, չրակլանման ունակությունը՝ կազմում է ապարի ծավալի 1,2—2,3 %-ը, սեղման ժամանակավոր դիմադրությունը՝ 1200—1800 կգ սմ²: Ինչքան մանրահատիկ է գրանիտը, այնքան մեծ է նրա ամրությունը: Փամբակի գրանիտը լավ հղկվում է և հղկված վիճակում գեղագարդությամբ ետ չի մնում մարմարներից:

Երևանում գրանիտը օգտագործված է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի, Վ. Ի. Լենինի և Խ. Աբովյանի արձանների պատվանդանների երեսպատման ու Զ. Դուկասյանի արձանի կառուցման համար:

Հայաստանի գրանիտային ապարների հանքավայրերը



Նկ. 11. Օպերայի և բալետի պետական թատրոնի շենքը Երևանում, որը հրապառված է
Փամբակի գրանիտով

Լուսանկար՝ Հեղինակի

Անհեն անսահմանափակ պաշարներ և կարող են լայն չափով օգտագործվել:

Հայաստանում առանձին նշանակություն կարող են ունենալ գարբույին և ավելի հիմքային կազմի ինտրուզիաները, բայց այս ուղղությամբ ուղղակի աշխատանք չի տարվում, քանի որ խորքային ապարների օգտագործումը Հայաստանի պայմաններում առանձին անհրաժեշտություն չէ:

* * *

ՍՍՌՄ Կոմունիստական պարտիայի 21-րդ համագումարի կողմից մշակված 1959—1965 թթ. երկրի զարգացման յոթամյա պլանում մեծ նշանակություն է արվում միութենական ռեսպուբլիկաների և նույն թվում Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության զարգացմանը: Մեր ռեսպուբլիկայում 1959—1965 թթ. ընթացքում պետական կապիտալ ներդրումները կկազմեն 1,25 միլիարդ ռուբլի: Դա նշանակում է, որ յոթը տարում ժողովրդական տնտեսության մեջ ներդրված միջոցները 80 միլ. ռուբլով կգերազանցեն մեր ռեսպուբլիկայի գոյության ընթացքում ներդրված միջոցներին:

Այսպիսի միջոցների ներդրումը նախատեսում է արդյունաբերության և էկոնոմիկայի զարգացման շտեսնված թափ, նախատեսվում է մի շարք նոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցում և գործող ֆաբրիկաների ու գործարանների ընդարձակում: Յոթնամյակի ընթացքում կառուցվելու է ավելի քան 150 արդյունաբերական ձեռնարկություն:

Մեծ թափ է ստանալու կոմունալ-ընակարանային շինարարությունը, որի զարգացման համար ներդրվելու է 360 միլիոն ռուբլի: Միայն պետական կոմունալ ներդրումների շնորհիվ շահագործման է հանձնելու ավելի քան 2300 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, այսինքն 4 անգամ ավելի, քան հանձնվել է նախորդ հնգամյակում:

Շինարարական աշխատանքների ահռելի ծավալի իրադրումը պահանջում է շինանյութերի արդյունաբերության, կոնստրուկցիաների և դիտալների բազմատեսակ ու զգալի աճ: Շինանյութերի անսպառ պաշարները Հայաստանում այս տեսակետից մեծ հնարավորություններ են ստեղծում: Ամե-

Նից առաջ մեծ արժեք են ներկայացնում Հիմնական շինանյութ հանդիսացող հրաբխային տուփերը:

Յոթնամյակի ընթացքում տուփի հանույթը ուսուպուրիկայում միայն ժողովնախորհի գծով, կհասնի 1320 հազար խորանարդ մետրի: Արդյունաբերական ձեռնարկությունների և կոմունալ շինարարության աննախընթաց վերելքի իրագործումը պահանջում է կառուցման ինդուստրիալ մեթոդների իրագործում:

Վերջին տարիների ձեռք բերած փորձը ցույց է տվել, որ շինարարության ամենանպատակահարմար եղանակը պահելային եղանակն է, եթե շինքի առանձին մասերը՝ պատերը, միջնապատերը, ծածկերը, կառուցվում են նախապես պատրաստված խոշոր մասերից:

Պանելային եղանակը միջոցների գգալի տնտեսմանը գուգընթաց կրծատում է շինարարության տևողությունը ավելի քան հինգ անգամ: Հայաստանում մեծ տարածում գտած հրաբրխային շինանյութերը՝ սպունգաքարը, խառամը, պերլիտը, հրաբխային մոխիրը և այլն, որոնք հանդիսանում են թեթև բետոնների բնական լցանյութ, հնարավոր են դարձնում պանելային և այլ ինդուստրիալ մեթոդների լայն չափով ներդրմանը շինարարության մեջ: Հայաստանի բնական հրաբրխային լցանյութերից պատրաստված երկաթ-բետոնային պանելները բավականին էժան են և օժտված են բարձր շինարական հատկություններով:

Առանձնապես մեծ է հայկական շինանյութերի նշանակությունը նաև այն տեսակետից, որ նրանք իրենց ցածր ինքնարժեքի շնորհիվ, որը միջին թվով կազմում է 1 ո. 40 կ. 1 մ³-ի համար, լրիվ արդարացնում են հեռավոր տեղափոխումների ժամանակի:

Հայաստանի խառամը, պերլիտը և տուփերը լայն չափով կարող են օգտագործվել մեր ուսուպուրիկայի սահմաններից դուրս: Առանձնապես բարձր պահանջ է ներկայացվում վերջին տարիներում, պերլիտի նկատմամբ, որի օգտագործման բնագավառները գնալով ընդլայնվում են: Լինելով բարձր որակի շինանյութ պերլիտը օգտագործվում է այժմ

նաև որպես լցորդ զանազան ներկերի, պլաստմասսայի և ասֆալտի արտադրությունում, որպես ֆիլտր և նույնիսկ որպես բարձր որակի պարարտանյութ:

1958 թ. Երևանում կայացած համամիութենական խորհրդակցությունում, նվիրված ջերմամեկուսական նյութերին և ծակոտկեն լցանյութերին, նշվեց Հայաստանի պերլիտների բարձր տեխնիկական հատկությունները և նրանց բազայի վրա Սովետական Միության մի շարք տնտեսական շրջանների կարիքները բավարարելու նպատակով մեծ մասշտաբի հանույթի կազմակերպումը և համապատասխան մշակման ֆաբրիկաների կառուցման անհրաժեշտությունը:

Հայաստանի բնական թեթև լցանյութերի բազայի վրա հնարավոր է 800—1800 կգ/մ³ ծավալային կշիռ ունեցող թեթև բետոնների և երկաթբետոնի ստացումը 50-ից մինչև 500 կգ/մ³ ճնշման դիմադրողականությամբ:

Ռեսպոբլիկայի զարգացման յոթնամյա պլանով նախատեսվում է Հայաստանի շինանյութերի հանույթի զգալի աճ, որը 1965 թ. կազմելու է՝ տուփաքար 2 միլ. մ³, տուփից պատրաստված երեսպատման սալեր 1մլն մ³, պեմզա, պեմզային ավազ և մոխիր 2 մլն մ³, տուփորետոնային բլոկներ 0,5 մլն մ³.

Հայկական ՍՍՌ ժողովադատության շինանյութերի վարչության տվյալների համաձայն համապատասխան կապիտալ միջոցների և տեխնիկայի առկայության պայմաններում ուեալ հնարավորություններ կան ավելացնելու պեմզանյութի արտադրությունը ևս 2 անգամ, թեթև բետոնային արտադրանքինը՝ 3 և տուփային երեսպատման սալերինը՝ 2 անգամ:

Այսպիսի քանակով շինանյութերի թողարկման համար կպահանջվի 70—80 մլն. ոռուլի կապիտալ ներդրումներ, այն ժամանակ, երբ Միության մյուս տնտեսական շրջաններում, որոնք զուրկ են նույնանման բնական շինանյութերից, նույն ծավալի արհեստական շինանյութերի արտադրության կազմակերպումը կպահանջի 300—400 մլն ոռուլի և հսկայական նյութատեխնիկական միջոցներ:

Սովետական Միությունում շինարարության մեջ կիրառվող թեթև բետոնների լցորդների պահանջը կազմում է տարեկան 32 մլն մ³. Հաշվի առնելով, որ բնական ծակոտկեն շինանյութերի պահարների գերակշռող մասը գտնվում է Հայաստանում, ապա հարկ չկա նշելու այն մեծ գերի մասին, որ պետք է ունենա մեր ռեսպուբլիկան շինանյութերի արդյունաբերության հետագա զարգացման գործում:

Այս բոլորի կողքին պետք է ավելացնել նաև այն, որ վերջին տարիներս մեր ռեսպուբլիկայի հրարխային քարտահակները օգտագործում են ոչ միայն որպես բնական շինանյութեր: Որոշ տեխնոլոգիական մշակումներից հետո զանազան քարատեսակները, կամ նրանցից ստացված պրոդուկտները կիրառվում են արդյունաբերության ամենազանազան ընագավառներում: Մենք արդեն կանգ առանք մի շարք հրարխային քարատեսակների արդյունաբերական նշանակության վրա, բայց այդ ուղղությամբ դեռևս քիչ աշխատանք է արված և մարդկային միտքը աշխատում է բացել քարերի նորանոր գաղտնիքները և ծառայեցնում է նրանք իր նպատակներին:

Ով կարող էր առաջներում, կամ նույնիսկ մի քանի տարի առաջ մտածել, որ քարերից կարելի է մանրաթել ստանալ: Բայց այսօր դա ոչ թե ինչ որ ծրագիր է, այլ իրականություն: Այդ խնդիրը հաջողությամբ լուծել են մի շարք հայ քիմիկոսներ Հայկ. ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Մանվելյանի ղեկավարությամբ: Իսկ որքան անսահման են ստացված քարաթելերի կիրառման բնագավառները: Քարաթելերից ստացվող նյութերն ու իրերը իրենց կիրառումը կգտնեն արդյունաբերության այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են հաստոցաշինությունը, ինքնաթիւաշինությունը, նաև աշխատավայրերությունը, ավտոմոբիլային արդյունաբերությունը, էլեկտրատեխնիկական իրերի արտադրությունը և այլն:

Բավական է նշել, որ քարաթելերից ստացվող ապակեպլաստիկը ունի պողպատի ամրություն, բացի այդ մի քանի անգամ նրանից թեթև է և չի վախենում ջրի ներգործությունից:

Մեր հրարխային քարատեսակների արժեքն ու նշանակությունը սրանով ես չի սահմանափակվում, եթե հաշվի առնենք

այն հանդամանքը, որ նրանք իրենց մեջ պարունակելով համարյա բոլոր քիմիական էլեմենտները հանդիսանում են ապագայի «հանքաքարեր»:

Այսպիսով այն, ինչ որ անցյալում Հայաստանի աղքատության խորհրդանիշն էր հանդիսանում, այսօր դարձել է մեր ուսպուբլիկայի շինարարության և արդյունաբերության զարգացման հիմնական բազան, մեր հարստության և հետագա առաջընթացի անսպառ աղբյուրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бончковский В. Ф. Внутреннее строение Земли, 1953.
2. Влодавец В. И. Вулканы Советского Союза, 1949.
3. Горшков Г. С. Извержение сопки Безымянной, Бюлл. вулк. станции, № 26, 1957.
4. Демехин А. П. Джермук, 1947.
5. Заварецкая Е. П. Вулканы, 1948.
6. Կարապետյան Հ. Տ. Արշակ լեռը, 1934:
7. Левченко С. В. Вулканализм и магматические горные породы, 1958.
8. Малхасян Э. Г. Потухший вулкан Дали-тапа. Журн. „Природа“, № 8, 1952.
9. Малхасян Э. Г., Вегуни А. Т. Перлиты Закавказья. Журн. „Природа“, № 8, 1958.
10. Մադարյան Հ. Գ. Մեր երկրի ընդերքի հարաւությունները, «Սովորական գրականություն», № 9, 1959:
11. Павлов А. П. Вулканы, землетрясений, моря и реки, 1948.
12. Путеводитель I Всесоюзного вулканологического совещания, Ереван, 1959.
13. Обручев В. А. Происхождение гор и материков, 1956.
14. Святловский А. Е. Атлас вулканов СССР, 1959.
15. Тиррель Д. В. Вулканы, 1934.
16. Хайн В. Е. Геология и полезные ископаемые Кавказа, 1959.
17. Ширинян К. Г. Страна потухших вулканов. Газета „Коммунист“ от 8 мая 1958.
18. Ширинян К. Г. Вулканические туфы и туфоловы Армении. Изд. АН Арм. ССР, 1961.
19. Щербаков Д. И. Клады в базальте. Журн. „Техника молодежи“, № 9, 1957.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ի Ն

Հայաստանը հանգած հրաբուխների երկիր	5
Հրաբուխներ և հրաբխային ապարներ	11
Հրաբխային ապարները որպես շինանյութ	18
Հրաբխային շինանյութերի դասակարգումը	22
1. Էֆֆուզիվ ծագման շինանյութեր	22
Բաղալտներ, անդեղիտո-բազալտներ, անդեղիտներ	23
Լիպարիտային կազմի ապարներ	29
Հրաբեկորային շինանյութեր	33
Գեմզա, պեմզային ավագ, հրաբխային մոխիր	35
Հրաբխային խառամ	37
Տուֆեր և տուֆոլավաներ	41
2. Խնորուզիվ ծագման շինանյութեր	52
Գրականություն	60

Կոնգստանտին Գրիգորյան
Կոնստանտին Շիրինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՇԽԱՆՁՈՒԹԵՐԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Երկրաբանական գիտությունների
ինստիտուտի գիտական խորհրդի հանձնաւորությամբ

Պատ. խմբագիր՝ է. Գ. ՄԱԼԻԽԱՅՅԱՆ
Հրատ. խմբագիր՝ Ա. Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Նկարչական ձևավորումը՝ չ. Ե. ԴԱՎԹՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ չ. Լ. ԳՈՐՈՅԱՆ
Սրբազրի՝ լ. Ս. ՄԱՐԱՅՅԱՆ

Վֆ 07231, պատվեր 148, հրատ. 2264, Խչի 825, տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 28/III 1963 թ., ստորագրված է տպագրու-
թյան 14/XII 1963 թ., տպագր. 4 մամուչ + 1 ներգիր, հրատ.
2,7 մամուչ, թուղթ $84 \times 108^{1/32}$: Գինը 14 կող.:

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակության տպարան, Երևան,
Բարեկամության 24: